2013թ. Միացյալ ժամի ծրագիր

Զավակն եմ ես Աստծո

«Մարդ արարածները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարված են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է» («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին»):

Հրահանգներ Միացյալ ժամի և հաղորդության ժողովին երեխաների ելույթի համար

Սիրելի Երեխաների Խմբի նախագահություններ և երաժշտության ղեկավարներ,

Այս տարի մենք կունենանք սրբազան օրհնություն և հնարավորություն օգնելու Երեխաների Խմբի յուրաքանչյուր երեխայի իմանալ, որ նա Աստծո զավակն է: Մենք հուսով ենք, որ երեխաները կսովորեն այս կարևոր ճշմարտությունը, զգալով մեր Երկնային Հոր սերը իրենց հանդեպ: Մինչ դուք աղոթքով սովորեցնեք վարդապետությունները միացյալ ժամի այս դասերին, դուք կարող եք օգնել երեխաներին հասկանալ իրենց աստվածային էությունը, նպատակը և ներուժը: Դուք կարող եք օգնել նրանց մեծացնել իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս և մեր Երկնային Հոր փրկության ծրագրի մասին իրենց վկայությունը: Եվ դուք կարող եք տալ նրանց հույս՝ իրենց ապագայի հետ կապված և ամրացնեք մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու ճանապարհին մնալու նրանց ցանկությունը:

Փնտրեք Հոգու օգնությունը, մինչ դուք պատրաստվում, ուսուցանում և վկայում եք այս ճշմարտությունների մասին: Ընտանիքները կօրհնվեն ձեր նվիրված ջանքերի միջոցով: Մենք սիրում ենք ձեզ և արտահայտում ենք մեր երախտագիտությունը նվիրյալ ծառայության համար, որը դուք մատուցում եք մեր թանկագին երեխաներին՝ ամրացնելու և պաշտպանելու համար:

Երեխաների Խմբի Գերագույն Նախագահություն

Հրահանգներ Միացյալ Ժամի համար

Ավետարանի Ուսուցանում

Օգտագործեք այս գրքույկը, երբ պատրաստվում եք ամեն շաբաթ միացյալ ժամին 15-րոպե տևողությամբ դաս մատուցել: Դուք կարող եք ամենշաբաթյա դասերը համալրել Եկեղեցու կողմից հաստատված այլ նյութերով, ինչպիսիք են՝ *Ընկերը* կամ *Լիահոնան:* Հետևյալ ուղեցույցները կօգնեն ձեզ պլանավորել և մատուցել դասերը:

Կայքում առկա են.
Այս գրքույկում նշված նյութերը, տեղեկությունները և ցուցադրական նյութերը առկա են LDS.org կայքի Serving in the Church բաժնում:

Ամեն շաբաթ Ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում:

Սիրեք նրանց, ում ուսուցանում եք: Երեխաների հանդեպ ձեր սերն արտահայտեք, սովորելով նրանց անունները և ծանոթանալով նրանց հետաքրքրությունների, տաղանդների և կարիքների հետ:

Հոգով ուսուցանեք վարդապետությունը: Դասին պատրաստվելիս աղոթեք առաջնորդություն ստանալու համար և ձգտեք ամրապնդել ձեր վկայությունը այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ուսուցանելու եք: Դա կօգնի ձեզ Հոգով ուսուցանել:

Սովորելու կոչ արեք: Այս գրքույկը նախատեսված է օգնելու ձեզ իմանալ ոչ միայն *այն,* ինչ պետք է ուսուցանեք, այլև *ինչպես* պետք է ուսուցանել և սովորելու կոչ անել: Դուք ավելի արդյունավետորեն կուսուցանեք վարդապետությունը, եթե ամեն դասին կատարեք հետևյալ երեք կետերը.

1. Առանձնացրեք վարդապետությունը: Պարզ ներկայացրեք վարդապետությունը, որը երեխաները պետք է սովորեն: Մտածեք, թե ինչպես կարող եք դա բանավոր և պատկերավոր ներկայացնել: (Որոշ օինակների համար տես փետրվարի չորրորդ շաբաթվա և հուլիսի երրորդ շաբաթվա դասերը:)
2. Օգնեք հասկանալ: Հետևեք, որ երեխաները խորապես հասկանան վարդապետությունը ուսուցանման տարբեր եղանակների միջոցով, որոնք կներգրավվեն նրանց ուսուցման մեջ, ինչպիսիք են՝ երգեր երգելը, դերակատարումները և սուրբ գրություններ ընթերցելը:
3. Խրախուսեք կիրառել: Երեխաներին հնարավորություն տվեք իրենց կյանքում կիրառել վարդապետությունը: Մտածեք, թե ինչպես նրանք կարող են արտահայտել տվյալ վարդապետության հետ կապված իրենց զգացումները կամ դրանց վերաբերյալ նպատակներ դնել:

Այս գրքույկը տրամադրում է լիարժեք դասեր տարվա որոշ շաբաթների համար: Մյուս շաբաթների համար տրվում են մտքեր, բայց

ոչ լիրաժեք դասեր: Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Դուք կարող եք գաղափարներ քաղել այս գրքույկի այլ դասեր կարդալով: Եթե ամիսը հինգերորդ կիրակի ունի, այդ դասաժամը օգտագործեք նախորդ դասերը վերանայելու համար: Հոգին կարող է ուղեկցել ձեզ, եթե դուք դասերի համար վարժություններ ծրագրեք և պատրաստեք:

Ձեր դասերին պատրաստվելիս աշխատեք երաժշտության ղեկավարի հետ:Երգերը կօգնեն ամրապնդել ուսուցանվող վարդապետությունները:Երբեմն դուք կարող եք հրավիրել ուսուցիչներին և իրենց դասարանները, որ օգնեն ձեզ ավետարանի որոշ մասեր ուսուցանելիս:

Որոշ դասեր առաջարկում են հրավիրել հյուրախոսների մասնակցելու Երեխաների Խմբի դասին: Նախքան այդ անձանց հրավիրելը, դուք պետք է ստանաք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի համաձայնությունը:

Դասերի հետ տրված են մի քանի ուսուցողական խորհուրդներ, որոնք կօգնեն բարելավել ձեր ուսուցման ունակությունը: Դասերը նաև ընդգրկում են նկարներ, որոնք կօգնեն ձեզ ընկալել, թե ինչպիսին է վարժությունը: Թեպետ ուսուցանելու ունակությունները կարևոր են, ձեր հոգևոր պատրաստվածությունը և վկայությունը կիրավիրեն Հոգին՝ հաստատելու այդ վարդապետությունները երեխաների սրտերում:

Երգեցողության ժամ

Երեխաների Խմբում երաժշտությունը պետք է ստեղծի ակնածալի մթնոլորտ, ուսուցանի ավետարանը և օգնի երեխաներին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և երգից բխող ուրախությունը:Միացյալ ժամի 20 րոպեն պետք է նվիրվի երգելուն ու երաժշտություն ուսուցանելուն: Այսպիսով դուք բավականին ժամանակ կունենաք նոր երգ սովորեցնելու համար և օգնելու երեխաներին հաճույքով երգել:

Այս գրքույկում զետեղված է նոր երգ, որը երեխաները պետք է սովորեն այս տարի (տես էջ 28): Այն նաև պարունակում է «Ինչպես օգտագործել երգը Երեխաների Խմբում» վերնագրով բաժին (տես էջեր 26-27) և լրացուցիչ մտքեր երեխաներին երգեր սովորեցնելու վերաբերյալ (տես էջեր 3, 11, 17):

Նախապատրաստություն. *Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Եթե Հոգով պատրաստվեք և ուսուցանեք, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք: (Տես* ՈՒՉԱՄԿ, *13:)*

Ուղեցույցներ հաղորդության ժողովի ելույթի համար

Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարության ներքո, հաղորդության ժողովին երեխաների ելույթն անց է կացվում սովորաբար տարվա չորրորդ եռամսյակում: Տարվա սկզբում, նախօրոք ծրագրերը քննարկելու նպատակով, հանդիպեք եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության խորհրդականի հետ, որը պատասխանատու է Երեխաների Խմբի համար: Երբ ծրագրերը վերջնական կլինեն, ստացեք նրա հավանությունը:

Ծրագրեք այնպես, որ երեխաները ներկայացնեն ծրագիրը միացյալ ժամի ամսական թեմաների հիման վրա: Տարվա ընթացքում գրի առեք երեխաների առանձին ելույթները և փորձառությունները՝ հնարավորության դեպքում հաղորդության ելույթի ժամանակ օգտագործելու համար:

Երբ ծրագրում եք, որ երեխաները կիսվեն այս տարվա թեմայի մասին իրենց սովորածով, մտածեք, թե ինչպես կարող են նրանք օգնել ներկաներին կենտրոնանալ ավետարանի այն վարդապետությունների վրա, որ իրենք են ուսուցանում: Նախագահության անդամներից մեկը կարող է ավարտել ժողովը ելույթի մասին կարճ ակնարկով:

Ելույթին նախապատրաստվելիս հիշեք հետևյալ ուղեցույցները.

- Փորձերը դասերից կամ ընտանիքներից անտեղի ժամանակ չպետք է խլեն:
- Հաղորդության ժողովին պատշաճ չէ օգտագործել ցուցադրական նյութեր, հատուկ հագուստներ և տեսանյութեր:

Նյութեր. *Դուք կարող եք գտնել ուսուցանման այնպիսի լրացուցիչ նյութեր, ինչպիսիք են գունավորման էջերը, պատմությունները,* Ընկեր, Լիահոնա *ամսագրերի և մանկամսուրի դասագրքերի փարժությունները, և* Ավետարանի արվեստի գիրքը: *Օգտագործեք այդ աղբյուրները որպես հավելում ձեր դասերին: Նաև փնտրեք ավետարանի որոշակի թեմաներին վերաբերող նյութեր* Ընկեր-*ում friend.lds.org կայքում: Այս միջոցները կարող են նաև տպվել և օգտագործվել երեխաներին ուսուցանելիս:*

Այս գրքույկում օգտագործված աղբյուրները

Այս գրքույկում օգտագործվել են հետևյալ նշաններն ու հապավումները.

ԵԵ	*Երեխաների Երգարան*
ԱԱԳ	*Ավետարանի արվեստի գիրք*
ՈՒՉԱՄԿ	*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում*

Շատ դասեր ներառում են առաջարկություններ նկարները օգտագործելու վերաբերյալ: Դուք կարող եք նկարներ գտնել *Ավետարանի արվեստի գրքում,* Երեխաների խմբի դասագրքի նկարների հավաքածուի մեջ, Եկեղեցու ամսագրերում և images.lds.org կայքում:

2013թ. Ուսումնական Ծրագիր

Ընդհանուր Ծրագիր

Մանկամսուր. *Նայեք ձեր փոքրիկներին,* Արևաշող. *Երեխաների Միություն 1,* Ըճ 4–7. *Երեխաների Միություն 3,* Խիզախներ 8–11. *Երեխաների Միություն 5*

Հիմնական Ծրագիր

Արևաշող. *Երեխաների Միություն 1,* Ըճ 4–7. *Երեխաների Միություն 3,* Խիզախներ 8–11. *Երեխաների Միություն 7*

Հունվար

Զավակն եմ ես Աստծո, և Նա ծրագիր ունի ինձ համար

Երգ. «Զավակն եմ ես Աստծո»
(ԵԵ, 2–3)

«Նույն ինքն Հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք» (Հռովմայեցիս Ը.16):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Վարժություն ամբողջ տարվա համար. *Հանառուս կիսվեք, թե ինչպես եք դուք զգացել, որ Աստված սիրում է ձեզ: Մի փոքր առարկա (ինչպես օրինակ կոտրից գնդակ, լոբի կամ գլաքար) դրեք թափանցիկ տարայի մեջ: Տարվա ընթացքում թույլ տվեք երեխաներին պատմել, թե ինչպես են նրանք զգացել, որ Աստված ճանաչում և սիրում է իրենց: Ամեն անգամ, երբ մի երեխա կիսվում է ինչ-որ մի բանով, թույլ տվեք նրան մի առարկա ավելացնել տարայի մեջ: Հաճախակի անդրադարձեք տարային, ցույց տալով, թե որքան բազում ձևերով է Երկնային Հայրն Իր սերն արտահայտում մեր հանդեպ:*

Շաբաթ 1. Աստված իմ Երկնային Հայրն է: Նա ճանաչում և սիրում է ինձ:

Ներկայացրեք վարդապետությունը *(խաղալով գուշակող խաղ).* Ասեք երեխաներին, որ դուք մտածում եք մեկի մասին, ով սիրում է մեզ, ճանաչում է մեզանից յուրաքանչյուրին, օգնում է մեզ և ապրում է հեռվում: Խնդրեք նրանց գուշակել, թե ում մասին եք դուք մտածում (Երկնային Հոր): Քննարկեք Երկնային Հոր հետ մեր հարաբերությունները: Հրավիրեք երեխաներին միասին կրկնել. «Աստվածն իմ Երկնային Հայրն է: Նա ճանաչում և սիրում է ինձ»:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրությունները).* Երեխաներին խմբերի բաժանեք: Թող յուրաքանչյուր խումբը կարդա Ենովս 1.5, Մովսես 1.6 և Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17, և քննարկի, թե ինչպես է Տերը դիմում յուրաքանչյուր մարգարեի: Հարցրեք երեխաներին. «Եթե Երկնային Հայրը այցելեր ձեզ, ինչպե՞ս Նա ձեզ կկանչեր»: Վկայեք, որ Աստված գիտի մեզանից յուրաքանչյուրին անուններով:

Օգնեք կիրառել *(երգեր երգելով).* Թող երեխաները շրջան կազմեն և իրար փոխանցեն մի քանի առարկաներ, որոնք ներկայացնում են Աստծո սերը Իր զավակների հանդեպ, միևնույն ժամանակ երգելով «Զավակն եմ ես Աստծո», (*ԵԵ,* 2–3) կամ «Գիտեմ Հայրս ապրում է», (*ԵԵ,* 5) երգերը: Առարկաները կարող են ներառել սուրբ գրությունները, հաղորդության նկարը, մրգի մի կտոր կամ մի ընտանիքի նկար: Անսպասելիորեն դադարեցրեք երգը և թող առարկա ունեցող երեխաները ասեն, թե ինչպես գիտեն, որ Աստված սիրում է իրենց: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

Շաբաթ 2 և 3. Երկնային Հոր Ծրագիրը երջանկության Ծրագիր է:

Ներկայացրեք վարդապետությունը. մի թղթի վրա գրեք՝ «Երկնային Հոր ծրագիրը երջանկության ծրագիր է»: Թուղթը դրեք տարայի մեջ և այն այնպես փաթաթեք, որ նվերի տեսք ստանա: Բարձր պահեք նվերը և ասեք երեխաներին, որ այնտեղ մի բան կա, ինչը նրանց երջանկություն կբերի: Թույլ տվեք նրանց գուշակել, թե ինչ կարող է այն լինել: Այնուհետև բացեք նվերը և թող մի երեխա կարդա նախադասությունը դասարանի համար: Բացատրեք, որ Երկնային Հայրը ծրագիր ունի, որով մենք կկարողանանք երջանիկ լինել և կրկին ապրել Նրա հետ:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով և պատասխանելով հարցերին).* Յուրաքանչյուր դասարանին տվեք մի բառաշերտ, որի վրա գրված կլինի հետևյալ հարցերից մեկը.

Ի՞նչ ունի իմ կյանքը և որտե՞ղ է այն սկսվել:
Ո՞րն էր իմ ընտրությունը և ի՞նչ պիտի ես փնտրեմ:
Ինչի՞ն ես պետք է հետևում և ինչի՞ց ես կարող եմ ամուր բռնել:
Ի՞նչ զգացողություն ես կունենամ, եթե հետևեմ Աստծո ծրագրին:

Հարմարեցրեք վարժությունները
ձեր Երեխաների Խմբի մեծությանը: Սուրբ գրությունները կարդալու համար մեծ Երեխաների Խումբը խմբերի բաժանելը հնարավոր է դարձնում ավելի շատ երեխաների մասնակցությունը: Բոլոր երեխաներին ներգրավվելու համար դուք կարող է կարիք չունենաք խմբերի բաժանել քիչ երեխաներ ունեցող Երեխաների Խումբը:

Նախաերկրային

Մահկանացու

Ետմահկանացու

Երգեք «Կիետևեմ Աստծո ծրագրին», (*ԵԵ,* 164–65) և քննարկեք առաջին հարցի պատասխանը: Կրկնեք նույնը մնացած երգի և հարցերի հետ:

Օգնեք հասկանալ *(ավարտել նախադասությունը).* Մենյակի երեք տարբեր մասերում դրեք նախաերկրային, մահկանացու և ետմահկանացու կյանքը ներկայացնող նկարներ: Թղթի վրա նկարեք ուրախ դեմք: Ասեք երեխաներին, որ ամեն անգամ, երբ դուք բարձրացնեք ուրախ դեմքը, նրանք պետք է ասեն «երջանիկ»: Կանգնեք նախաերկրային կյանքի նկարի մոտ և նկարագրեք Երկնային Խորհուրդը: Հենց որ հնարավոր է լինում, թողեք, որ երեխաները ավարտեն ձեր նախադասությունները «երջանիկ» բառով, մինչ դուք կբարձրացնեք ուրախ դեմքը: Օրինակ՝ «Երկնային Հայրը ուզում էր, որ մենք լինենք *երջանիկ:* Նա ասաց մեզ Իր ծրագրի մասին, որ պետք է մեզ երկիր ուղարկեր և պետք է մարմին ստանայինք: Նա ասաց, որ մենք կարող էինք *երջանիկ* լինել, եթե հնազանդվեինք Նրա պատվիրաններին: Նա գիտեր, որ մեզ Փրկիչ էր հարկավոր, որպեսզի օգներ մեզ լինել *երջանիկ,* քանի որ մեզանից ոչ ոք կատարյալ չէր: Երբ մենք լսեցինք Երկնային Հոր ծրագրի մասին, մենք անչափ *երջանիկ* էինք և ուրախ-ուրախ բացականչեցինք»: Շարունակեք այս վարժությունը, մոտենալով սենյակի մյուս մասին և նկարագրեք փրկության ծրագիրը. «Դուք եկաք ձեր ընտանիք, և նրանք շատ *երջանիկ* էին, երբ դուք ծնվեցիք»: «Մենք *երջանիկ* ենք, երբ արդար ընտրություններ ենք կատարում»: «Մենք *երջանիկ* կլինենք, երբ մեր ընտանիքների և Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի հետ հավերժ լինենք սելեստիալ արքայությունում»: Ավելացրեք ծրագրի մանրամասները երեխաների տարիքին և հասկացողությանը համապատասխան:

Օգնեք կիրառել *(նկարներ նկարել).* Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթի մի կտոր, որի վրա նկարված է ուրախ դեմք և գրված է. «Երկնային Հոր ծրագիրը երջանկության ծրագիր է»: Հրավիրեք նրանց նկարել մեր Երկնային Հոր ծրագրից ինչ-որ մի բան, ինչը նրանց երջանկացնում է: Վկայեք, որ Հոր ծրագիրը մեր հավերժական ուրախության համար է:

Սեր ցուցաբերեք.
«Եթե սիրենք նրանց, ում ուսուցանում ենք, նրանք դառնում են Հոգու հանդեպ ավելի ընկալունակ» (ՈՒՉԱՄԿ, 31): Դուք կարող եք երեխաների հանդեպ ձեր սերն ավելացնել, եթե աղոթեք նրանցից յուրաքանչյուրի համար, ծանոթանաք նրանց հետաքրքրություններին և մտահոգություններին, նրանց անունով դիմեք և ուշադիր լսեք նրանց:

Շաբաթ 4. Ես ունեմ ազատ ընտրության իրավունք, և ես պատասխանատու եմ իմ ընտրությունների համար:

Ներկայացրեք վարդապետությունը. Պատրաստեք երկու բառաշերտեր, մեկի վրա գրված «Ես ունեմ ազատ ընտրելու իրավունք» և մյուսի վրա՝ «Ես պատասխանատու եմ իմ ընտրությունների համար»: Երեխաներին երկու խմբի բաժանեք: Խնդրեք երկու երեխաների առաջ գալ: Խնդրեք նրանցից մեկին պահել առաջին բառաշերտը և թող խմբերից մեկը կանգնի և ասի. «Ես ունեմ ազատ ընտրելու իրավունք»: Խնդրեք մյուս երեխային պահել երկրորդ բառաշերտը, և թող մյուս խումբը ոտքի կանգնի և ասի. «Ես պատասխանատու եմ իմ ընտրությունների համար»: Կրկնեք մի քանի անգամ և թող յուրաքանչյուր խումբը ասի յուրաքանչյուր արտահայտությունը:

Օգնեք հասկանալ *(քննարկելով հետևանքները).* Հարցրեք երեխաներին, թե ինչ հետևանք կլինի, եթե նրանք ընտրեն չուտել, ձեռք տալ տաք սալօջախին, եկեղեցի հաճախել կամ բարի լինել ուրիշների հանդեպ: Բացատրեք, որ Երկնային Հայրը սիրում է մեզ և ուզում է, որ մենք լավ ընտրություններ կատարենք և ստանանք այդ ընտրությունների օրհնությունները:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալով).* Թերթիկների վրա գրեք որոշ լավ ընտրություններ և որոշ վատ ընտրություններ, որոնք երեխան կարող է կատարել: Թերթիկները դրեք տարայի մեջ: Թող երեխաները երկու շարք կազմեն՝ «ընտրություն» շարքը և «հետևանք» շարքը: Թող յուրաքանչյուր շարքի առաջին երեխան քայլելով առաջ գա, մինչ բոլորը երգում են «Ընտրիր ճիշտը» երգի առաջին տողը (*Hymns, no.* 239): «Ընտրություն» շարքի երեխան թող տարայից հանի և կարդա մի ընտրություն: Թող մյուս երեխան ասի այդ ընտրության հնարավոր հետևանքը: Թող մնացած երեխաները իրենց բթամատերը վերև պահեն, եթե դա լավ ընտրություն է և բթամատերը ցած ուղղեն, եթե դա վատ ընտրություն է: Շարունակեք այնքան, որքան ժամանակը թույլ է տալիս:

Վարժության մեջ բոլոր երեխաներին ակտիվորեն ներգրավվելը նրանց ուշադրությունը կենտրոնացնում է և նրանց տալիս է սովորելու փորձառությանը մասնակցելու հնարավորություն:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին երգել «Զավակն եմ ես Աստծո» (*CS,* 2–3) երգի կրկներգը և ուշադրություն դարձնել այն բառերին, որոնք նկարագրում են, թե ինչ նրանք կկամենային, որ մեկն աներ իրենց համար: Գրեք նրանց պատասխանները (առաջնորդիր, քայլիր ինձ հետ, օգնիր, սովորեցրու) գրատախտակի վրա: Յուրաքանչյուր բառի վերաբերյալ հարց տվեք, օրինակ՝ «Ո՞վ է մեզ առաջնորդում» կամ «Ինչու՞ եք դուք ուզում, որ մեկը քայլի ձեզ հետ»: Վկայեք ծնողներ, ուսուցիչներ, ղեկավարներ, մարգարեներ, սուրբ գրություններ և Սուրբ Հոգին ունենալու օրհնությունների մասին, որոնք օգնում են մեզ գտնել Երկնային Հոր մոտ վերադառնալու ուղին:

Փետրվար

Երկիրն արարվել է Երկնային Հոր զավակների համար

Երգ. «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ»
(CS, 228–29)

«Մենք կստեղծենք մի երկիր, որի վրա սրանք կկարողանան բնակվել. և դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց» (Աբրահամ 3.24–25):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***



Փնտրեք Հոգին.
Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Երբ Հոգով եք պատրաստվում և ուսուցանում, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք:

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրը Երկնային Հոր ղեկավարությամբ:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկարներ նայելով).* Ցուցադրեք երկրագնդի նկարը և հարցրեք երեխաներին, թե ով է ստեղծել երկրագունդը: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը ստեղծել է Երկիրը Երկնային Հոր ղեկավարության ներքո: Այնուհետև ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը և հրավիրեք երեխաներին ասել. «Հիսուս Քրիստոսը ստեղծեց Երկիրը»:

Օգնեք հասկանալ *(նկարներ նկարելով).* Ասացեք երեխաներին, որ Երկնային Հոր երջանկության ծրագրի մի մասն էր կազմում Երկիրն արարելը, որտեղ մենք մարմիններ կստանայինք, որպեսզի կարողանայինք զարգանալ և սովորել: Գրատախտակին նկարեք վեց մասից բաղկացած շրջաններ: Երեխաներին բաժանեք վեց խմբի, և խնդրեք յուրաքանչյուր խմբին կարդալ Արարման վեց օրերի վերաբերյալ հետևյալ սուրբգրքյան հատվածները. Ծննդոց Ա.1–5 (օր 1), Ծննդոց Ա.6–8 (օր 2), Ծննդոց Ա.9–13 (օր 3), Ծննդոց Ա.14–19 (օր 4), Ծննդոց Ա.20–23 (օր 5), Ծննդոց Ա.24–31 (օր 6): Հրավիրեք յուրաքանչյուր խմբին հերթով առաջ գալ, պատմել մնացած երեխաներին, թե ինչ տեղի ունեցավ այն օրը, որի մասին նրանք կարդացին, և նկար նկարել, որը կներկայացնի շրջանի այդ համապատասխան օրը: Միասին կարդացեք Ծննդոց Բ.1–3: Երեխաների հետ միասին կրկնեք, թե ինչ տեղի ունեցավ Արարման յուրաքանչյուր օրը:

Շաբաթ 2. Անկումը Աստծո ծրագրի մասն էր:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկար նայելով).* Ցուցադրեք Ադամի և Եվայի նկարը: Ասացեք երեխաներին, որ Ադամն ու Եվան առաջին մարդիկն էին, որ եկան աշխարհ և մարմին ստացան, նրանք տեղավորվեցին Եդեմ կոչվող պարտեզում: Բացատրեք, որ երբ նրանք հեռացան պարտեզից, մեզ համար հնարավոր դարձավ Երկիր գալ: Նրանց պարտեզից հեռանալը կոչվում է Անկում: Գրատախտակին գրեք «Անկումը Աստծո ծրագրի մասն էր», և թող երեխաները ձեր հետ միասին ասեն դա:

Օգնեք հասկանալ *(քննարկելով վարդապետությունը).* Գրատախտակին երկու շրջան գծեք, և մեկը կոչեք *հոգևոր աշխարհ* և մյուսը *երկիր:* Բացատրեք, որ երբ Ադամն ու Եվան Եդեմի պարտեզում էին, մենք հոգևոր աշխարհում էինք: Ցույց տվեք որոշ երեխաների նկարներ և ամրացրեք դրանք գրատախտակին «հոգևոր աշխարհի» շրջանի մեջ: Բացատրեք, որ Ադամի ու Եվայի պարտեզից հեռանալուց հետո մենք կարողացանք աշխարհ գալ: Հրավիրեք մի երեխայի երեխաների նկարները տեղափոխել «երկիր» շրջանակի մեջ: Խնդրեք երեխաներին դեպի վեր ուղղել իրենց բթամատները, եթե նրանք կարծում են, որ Անկումը լավ էր, և հրավիրեք մի երեխայի բացատրել, թե ինչու:

Օգնեք կիրառել *(համընկումների խաղ խաղալով).* Պատրաստեք մի քանի զույգ համընկնող արտահայտություններ, որոնք ներկայացնում են մահկանացու կյանքի ընթացքում ունեցող օրինությունների փորձառություններ (օրինակ՝ մարմին, ընտանիքներ, բարու և չարի միջև ընտրել, սովորելու հնարավորություն, առողջություն և հիվանդություն, երջանկություն և տխրություն, երջանկություն և վիշտ): Թերթիկները հակառակ կողմի վրա ամրացրեք գրատախտակին: Հրավիրեք երեխաներին հերթով ընտրել երկու թերթիկ, որ տեսնեն, թե թերթիկները համընկնում են, թե ոչ: Երբ դրանք համընկնեն, քննարկեք, թե ինչու է այն օրհնություն:

Շաբաթ 3. Ես երկիր եմ ուղարկվել մարմին ստանալու և փորձվելու համար:

Երեխաները կարող են լինել ձեր ամենալավ ցուցադրական նյութը:

Ներկայացրեք վարդապետությունը *(տեսանյութի օգնությամբ).* Գրատախտակին գրեք. «Ես երկիր եմ ուղարկվել _____ ստանալու և փորձվելու համար»: Հրավիրեք երեխաներից մեկին առաջ գալ և նկարել իր մարմինը գրատախտակի կամ մի մեծ թղթի վրա: Խնդրեք երեխաներին ասել ձեզ, թե ինչ է պատկերված (մարմին): Լրացրեք բաց թողնված բառը և թող երեխաները միասին կարդան նախադասությունը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(ուսանելիցելով ֆիզիկական վարժությունը).* Պտուտակ պատրաստեք, որը ցուցադրում է մարմնի տարբեր մասերի նկարներ (տես ստորև օրինակը):

Քննարկեք մի քանի բաներ, որ մեր մարմինը կարող է անել, և հրավիրեք երեխաներին ձեզ հետ միասին անել դրանք (օրինակ՝ շարժել ձեր մատները, դոփել ձեր ոտքերով և պտտվել): Բացատրեք, որ մեր աշխարհ գալու պատճառներից մեկն այն է, որ մերք փորձվենք, թե արդյոք կօգտագործենք մեր մարմինները Երկնային Հոր ուսմունքներին հնազանդվելու համար: Հրավիրեք երեխաներին հերթով պտտեցնել սլաքը և ասել, թե ինչպես նրանք կարող են օգտագործել հետևյալ մարմնի մասը Երկնային Հորը հնազանդվելու համար: (Եթե դուք չեք կարող պտուտակ պատրաստել, մատով ցույց տվեք ձեր մարմնի տարբեր մասերը և հարցրեք երեխաներին, թե ինչպես նրանք կարող են օգտագործել իրենց մարմնի այդ մասը Երկնային Հորը հնազանդվելու համար:) Երեխաներին հրավիրեք երգել «Ես ունեմ երկու ականջ» երգը (*CS,* 269):



Պտուտակի համար սեղմեք այստեղ:

Նկարներ. *Խրախուսեք երեխաներին իրենց նկարները ցույց տալ և քննարկել իրենց ընտանիքների հետ: Սա կօգնի նրանց հիշել, թե ինչ են իրենք սովորել: Դա նաև ծնողներին հնարավորություն կտա քննարկել ավետարանի սկզբունքները իրենց երեխաների հետ (տես ՈՒՉԱՄԿ, 167):*

Շաբաթ 4. Եթե ես պահեմ պատվիրանները, ես կարող եմ կրկին ապրել Երկնային Հոր հետ:

Ներկայացրեք վրդապետությունը *(երգ երգեսվ).* Գրատախտակին գրեք. «Եթե ես պահեմ _____, ես կարող եմ կրկին ապրել Երկնային Հոր հետ»: Կիսաձայն երգեք «Պահիր պատվիրանները» երգը (*CS,* 146): Հրավիրեք երեխաներին ոտքի կանգնել, երբ իրենք գուշակեն երգը և իրենց հետ միասին կիսաձայն երգել: Հարցրեք. «Ի՞նչ պետք է մենք անենք Երկնային Հոր հետ կրկին ապրելու համար»: Գրատախտակին գրեք «պատվիրաններ» բառը: Հրավիրեք երեխաներին ձեր հետ միասին երգել երգը:

Օգնեք հասկանալ *(քննարկել պատվիրանները).* Հրավիրեք մի քանի երեխաների կիսվել որոշ կանոններով, որոնք սահմանել են իրենց ծնողները, իրենց ընտանիքի անդամների ապահովության համար: Հարցրեք. «Ի՞նչ է պատահում, երբ դուք հնազանդվում ենք կանոններին»: Գրատախտակին գրեք նրանց մտքերը: Բացատրեք, որ ծնողները իրենց սերն են ցուցաբերում կանոններ սահմանելու միջոցով: Հարցրեք՝ «Ի՞նչ է պատահում, երբ մենք հնազանդվում ենք Երկնային Հոր պատվիրաններին»: Երեխաների որոշ պատասխաններ գրեք գրատախտակին: Բացատրեք, որ ճիշտ ինչպես իրենց ծնողների կանոններին հնազանդվելն է նրանց ապահով պահում, Երկնային Հոր պատվիրաններին հնազանդվելն էլ կօգնի նրանց ապահովության մեջ պահել: Բերեք ձեր վկայությունը, որ եթե մենք հնազանդվենք պատվիրաններին, մենք կկարողանանք վերադառնալ և կրկին ապրել Նրա հետ:

Օգնեք կիրառել *(սուրբ գրություններ կարդալով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք մատիտ և չորս մասի բաժանված թերթիկ՝ ամեն մասի վրա գրված հետևյալ սուրբ գրությունների հատվածներից մեկը. ՎԱՈՒ 1.37, ՎԱՈՒ 10.5, ՎԱՈՒ 59.9–10, և ՎԱՈՒ 119.4: Խնդրեք երեխաներին ամբողջ դասարանով միասին կարդալ յուրաքանչյուր սուրբ գրությունը, քննարկել այնտեղ նկարագրված պատվիրանը և իրենց թերթիկների վրա նկարել այդ պատվիրանի վերաբերյալ նկար: Երբ նրանք ավարտեն, հրավիրեք երեխաներին կիսվել, թե պատվիրանները պահելը ինչպես կօգնի նրանց պատրաստվել կրկին ապրել Երկնային Հոր հետ:

Սեղմեք այստեղ աշխատանքային նյութերի համար:

Մարտ

Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է

«Ականջ դրեք այս խոսքերին: Ահա, ես Հիսուս Քրիստոսն եմ՝ աշխարհի Փրկիչը» (ՎԱՈՒ 43.34):

Երգ. «ԵթեՓրկիչը կողքիս լիներ»
(այս ծրագրի 28-րդ էջում)

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը:Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը սովորեցրեց ավետարանը և օրինակ ծառայեց մեզ համար:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգելով).* Մի քանի անգամ միասին երգեք «Արա ինչպես ես» երգը (*ՀՏ,* 276), հրավիրելով տարբեր երեխաների ընտրել կատարվող գործողությունը: Բացատրեք, որ երբ մենք հետևում ենք որևէ մեկի գործողություններին, մենք հետևում ենք նրա օրինակին: Հարցրեք, թե ով մեզ տվեց կատարյալ օրինակ, որպեսզի հետևենք (Հիսուս Քրիստոսը): Հրավիրեք երեխաներին միասին ասել. «Հիսուս Քրիստոսը օրինակ ծառայեց մեզ»:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրություններ).* Հետևյալ իրադարձությունների նկարները ամրացրեք գրատախտակին. Քրիստոսի մկրտությունը, Քրիստոսը երեխաների հետ, Քրիստոսն աղոթելիս և Քրիստոսն ուսուցանելիս: Միասին կարդացեք հետևյալ սուրբ գրություններից մեկը, և խնդրեք երեխաներին բացատրել, թե ինչ է Քրիստոսն ուսուցանում այդ սուրբ գրությունում. Մարկոս ԺԶ.15, Հովհաննես ԺԳ.34–35, 3 Նեփի 11.37, 3 Նեփի 18.19: Դանդաղ ցույց տվեք յուրաքանչյուր նկարը և հրավիրեք երեխաներին կանգնել, երբ դուք ցույց տաք այն նկարը, որը լավագույն ձևով ներկայացնում է Քրիստոսին անելիս այն, ինչ Նա սովորեցնում է մեզ անել այն սուրբ գրությունում, որը դուք կարդացիք: Նույնը կրկնեք մնացած սուրբ գրությունների հետ:

Օգնել կիրառել *(նկար նկարելով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թերթիկ, և հրավիրեք նրանց նկարել իրենց՝ Քրիստոսի օրինակին հետևելիս: Օրինակ, երեխան կարող է նկարել իրեն մկրտվելիս, ընկերոջն ավետարանն ուսուցանելիս կամ որչէ մեկին օգնելիս: Հրավիրեք մի քանի երեխաների ցույց տալ իրենց նկարները մյուս երեխաներին և խրախուսեք նրանց ցույց տալ իրենց նկարները իրենց ընտանիքներին:

Ամենի հասկանալուն է, որ երեխաները ակնածալից լինեն, երբ նրանք ներգրավված լինեն սովորելու ընթացքի մեջ: Այս վարժության մեջ, երբ երեխաները ակնածալից կերպով կանգնում և նստում են, սա կօգնի գրավել նրանց ուշադրությունը:

Խրախուսեք լավ վարք ունենալ. *Երեխաների լավ վարքը գովելը ամենի լավ կնպաստի լավ վարք ունենալուն, քան խնդրելը, որ վերջ տան վատ վարքագծին:*

Շաբաթ 2. Քրիստոսի Քավության շնորհիվ ես կարող եմ ապաշխարել և կրկին ապրել Աստծո հետ:

Ներկայացրեք վարդապետությունը *(լրացնելով բացթողումները).* Նախօրոք գրատախտակին գրեք. «Քրիստոսի _____ շնորհիվ ես կարող եմ _____ և կրկին ապրել _____ հետ»: Առանձին բառաշերտերի վրա գրեք *Քավություն, ապաշխարել* և *Աստծո* բառերը և ամրացրեք դրանք սենյակի երեք աթոռների տակ: Հրավիրեք երեխաներին գտնել բառաշերտերը և դնել դրանք գրատախտակի վրա իրենց պատշաճ տեղում: Միասին կարդացեք նախադասությունը:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրություններ և պատասխանելով հարցերին).* Գրատախտակին դրեք Քրիստոսը Գեթսեմանիում և Խաչելության նկարները: Նկարները ծածկեք թղթի ավելի փոքր կտորներով: Յուրաքանչյուր թերթիկի վրա գրեք նկարների իրադարձությունների վերաբերյալ հարցեր և սուրբ գրությունների մեջբերում Մատթեոս 26–27 կամ Ղուկաս 22–23-ից, որտեղ կարելի է գտնել պատասխանը: (Օրինակ. Ինչպե՞ս է կոչվում այն վայրը, որտեղ Հիսուսը գնաց աղոթելու: Մատթեոս ԻԶ.36):

Երեխաներին բաժանեք խմբերի, և խնդրեք յուրաքանչյուր խմբի կարդալ սուրբ գրություններից մեկը և գտնել հարցի պատասխանը: Թող խմբերը կիսվեն իրենց հարցերի պատասխաններով և հեռացնեն համապատասխան թերթիկները, որպեսզի հայտնվեն նկարները:

Օգնեք կիրառել *(առարկայական դաս դիտելը).* Երեխաների հետ քննարկեք *Քավություն* և *ապաշխարություն* բառերի իմաստը, և բացատրեք, թե Քավությունը ինչպես կարող է օգնել մեզ (տես *Հավատքին հավատարիմ* [2004], 14–20, 132–35): Երեխաներին մի նվեր ցույց տվեք: Խնդրեք մի երեխայի փորձել նվերը տալ մեկ այլ երեխայի, և խնդրեք երկրորդ երեխային մերժել այն: Բացատրեք, որ երբ մենք չենք ընդունում մեզ տրված նվերը, մենք չենք կարող վայելել նվերից բխող օրհնությունները: Թող երեխաները ուշադիր լսեն, թե ինչ պետք է իրենք անեն, որպեսզի ընդունեն Քավության պարգևը, մինչ դուք միասին կկարդաք Վարդապետություն և Ուխտեր 19.16:

Կրտսեր երեխաներին սուրբ գրությունների ընթերցանության փարժությունը հարմարեցնելու համար, խնդրեք նրանց լսել, մինչ դուք կարդում եք և հետո կանգնել, երբ նրանք լսեն յուրահատուկ բառ կամ արտահայտություն:

Շաբաթ 3. Քանի որ Հիսուսը հարություն առավ, ես նույնպես հարություն կառնեմ:

Ներկայացրեք վարդապետությունը *(պատմություն լսելով).* Օգտագործեք Մանկամսուրի ձեռնարկի էջ 123-ի նկարը (տես էջ 121-ի ցուցումները) Հարության պատմությունը պատմելիս (տես Հովհաննես ԺԹ.41–42, Ի.1, 11–18): Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը հարություն առավ, Նրա մարմինն ու հոգին վերամիավորվեցին. սա հնարավոր դարձրեց, որ բոլորն էլ հարություն առնեն: Թող երեխաներն ասեն. «Քանի որ Հիսուսը հարություն առավ, ես նույնպես հարություն կառնեմ»:

Օգնեք հասկանալ *(քննարկելով զգացմունքները).* Գրատախտակին գրեք բառեր, որոնք նկարագրում են, թե ինչպես կարող էին իրենց զգալ աշակերտները Հիսուսի մահվան օրը (ինչպես օրինակ *վիշտ, թախիծ, տխրություն,* և *հուսահատություն*): Թող երեխաները առաջարկեն այդ բառերի հականիշները (ինչպես օրինակ *ուրախություն, երջանկություն, հույս* և *հավատք*) և գրեն դրանք գրատախտակին: Բացատրեք, որ այս զգացմունքները հենց այն են, ինչ աշակերտներն ունեցան, երբ Հիսուսը հարություն առավ: Քննարկեք օրհնություններից մի քանիսը, որ գալիս են իմանալուց, որ մենք հարություն կառնենք (տես Եսայիա ԻԵ.8, Ալմա 22.14):

Օգնեք կիրառել *(կիսվելով զգացմունքներով).* Գրատախտակին գրեք. «Ես շնորհակալ եմ, որ Հիսուսը հարություն առավ, քանի որ . . .»: Հրավիրեք ծխի մի անդամի, ում սիրելի անձնավորությունը մահացել է, գալ Երեխաների Միություն և համառոտ ձևով կիսվել, թե ինչու է նա շնորհակալ Հարության համար: Հարցրեք երեխաներին, արդյոք նրանք գիտեն որևէ մեկին, ով մահացել է, և հրավիրեք նրանց փակել իրենց աչքերը և մտածել այդ անձնավորության մասին: Հրավիրեք երեխաներից մի քանիսին կանգնել և լրացնել գրատախտակին գրված նախադասությունը և կիսվել, թե ինչ նշանակություն ունի Հարությունը նրանց համար:

Ցուցադրական նյութեր. *Երեխաները լավ են ընդունում ցուցադրական նյութերը: Ցուցադրական նյութերի բազմազանությունը երեխաների մեջ շարունակաբար հետաքրքրություն կառաջացնի (տես ՈՒՉԱՄԿ, 89–90):*

Շաբաթ 4. Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է:

Ներկայացրեք վարդապետությունը *(քննարկելով «Փրկիչ» բառը).* Ցուցադրեք որոշ առարկաներ կամ նկարներ, որոնք ներկայացնում են մարդկանց, ովքեր կարող են փրկել մեր կյանքը (ինչպես օրինակ՝ բժիշկ, ոստիկան կամ փրկարար), և քննարկեք, թե ինչպես կարող են նրանք փրկել մեզ: Ցույց տվեք Հիսուսի նկարը և բացատրեք, որ Նա միակն է, ով զորություն ունի փրկելու մեզ մահվան և մեղքի հավիտենական հետևանքներից: Գրատախտակին գրեք. «Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է» և երեխաների հետ կարդացեք այն՝ հատուկ շեշտելով «Փրկիչ» բառը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(լսելով պատմություններ սուրբ գրություններից).* Երեխաներին պատմեք որոշ պատմություններ սուրբ գրություններից այն մարդկանց վերաբերյալ, ովքեր ազատվեցին մեղքից Փրկչի միջոցով (օրինակ՝ Ալմա Կրտսերը [տես Ալմա 36.6–24], Ենովսը [տես Ենովս 1.1–8], Զիզրոմը [տես Ալմա 15.3-12], Լամոնիի հայրը [տես Ալմա 22.1–26] կամ Հիսուսի մոտ բերված մարդը [տես Ղուկաս Ե.17–26]): Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք բոլորս կարող ենք ազատվել մեղքից: Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է, և հրավիրեք մի քանի երեխաների բերել Նրա վերաբերյալ իրենց վկայությունները:

Ապրիլ

Հիսուս Քրիստոսը վերականգնեց Իր Եկեղեցին Վերջին Օրերում

Երգ. Ձեր ընտրությամբ երգեք *Երեխաների Երգարանի* **երգերից մեկը:**

«Ես առաջ եմ ուղարկել իմ ավետարանի լրիվությունը՝ իմ ծառա Ջոզեֆի ձեռքով» (ՎԱՈՒ 35.17):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Վկայեք. *Երեխաներին ուսուցանելիս, օգտվեք ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ հաստատուն վկայություն բերելու առիթից (տես ՈՒՉԱՄԿ, 45):*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների մահից հետո ավետարանի ճշմարտությունները կորան:

Ներկայացրեք վարդապետությունը *(քննարկելով).* Խնդրեք երեխաներին անվանել մի քանի բաներ, որոնք ուսուցանեց Հիսուս Քրիստոսը, երբ Նա երկրի վրա էր: Ցուցադրեք Քրիստոսի նկարը, որտեղ Նա կարգում է առաքյալներին: Բացատրեք, որ Քրիստոսի մահից և հարությունից հետո Նրա առաքյալները ուսուցանեցին ավետարանը, սակայն շատ մարդիկ չէին լսում նրանց. կարճ ժամանակ անց Առաքյալները մահացան, և որոշ կարևոր ճշմարտություններ ավետարանի վերաբերյալ այլևս չէին ուսուցանվում: Գրատախտակին գրեք. «Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների մահից հետո ավետարանի ճշմարտությունները կորան», և թող երեխաներն ասեն այն ձեզ հետ միասին:

Նկարելը թույլ է տալիս երեխաներին պատասխանել ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ իրենց գիտելիքները: Երեխաներին դուր է գալիս տեսնել, որ իրենց նկարներն օգտագործվում են որպես ցուցադրական նյութեր:

Օգնեք հասկանալ *(նկարներ նկարելով).* Գրատախտակին գրեք ավետարանի մի քանի սկզբունք, որոնք Ուխտադրժության ժամանակ կորել կամ փոփոխվել էին (օրինակ՝ մկրտություն, քահանայություն, տաճարներ, ապրող մարգարեներ և հաղորդություն): Երեխաներին բաժանեք փոքր խմբերի: Յուրաքանչյուր խմբի տվեք ավետարանի այդ սկզբունքներից մեկը վրան գրված թերթիկ և խնդրեք երեխաներին նկարել այդ սկզբունքը ներկայացնող նկար: Յուրաքանչյուր խմբից հրավիրեք մեկական երեխա, որպեսզի իրենց նկարը դնեն գրատախտակին: Բացատրեք, որ երբ Քրիստոսը երկրի վրա էր, Նա ուսուցանեց ավետարանի այս բոլոր կարևոր ճշմարտությունները: Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը: Վերցրեք բոլոր նկարները և թաքցրեք: Այնուհետև խնդրեք նրանց բացել իրենց աչքերը: Բացատրեք, որ ավետարանի ճշմարտությունները կորել էին Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների մահից հետո: Պատմեք երեխաներին, որ ավետարանը վերականգնվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով: Նկարները նորից դրեք իրենց տեղը և վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի բոլոր ճշմարտությունները, որոնք մի ժամանակ կորել էին: (Նկարները պահեք շաբաթ 4-ում օգտագործելու համար:)

Շաբաթ 2. Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկար նայելով).* Առաջին Տեսիլքի նկարը ծածկեք թղթի մի քանի փոքր կտորներով: Հրավիրեք երեխաներին մեկ առ մեկ հեռացնել թերթիկները: Խնդրեք երեխաներին լուռ ձեռք բարձրացնել, երբ նրանք կռահեն, թե ինչ նկար է թաքցված: Բոլոր թերթիկները հեռացնելուց հետո խնդրեք երեխաներին պատմել ձեզ, թե ինչ է տեղի ունենում նկարում:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով).* Երեխաներին ցույց տվեք, թե սուրբ գրություններում որտեղ կարող ենք կարդալ Ջոզեֆ Սմիթի նկարագրությունը կապված Սրբազան Պուրակի իր փորձառության հետ (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14–19): Կարդացեք կամ խնդրեք մի քանի երեխաների կարդալ որոշ հատվածներ, որոնք նկարագրում են, թե ինչ պատահեց: Դուք կարող եք խնդրել փոքրիկներին որոշ պարզունակ գործողություններ անել, ինչպես օրինակ՝ կանգնել և վեր ձգել իրենց ձեռքերը ինչպես ծառեր կամ ծալել իրենց ձեռքերը, կարծես թե նրանք աղոթում են: Հարցրեք երեխաներին, թե ինչ զգացողություն նրանք կունենային, եթե նրանք կարողանային տեսնել, թե ինչպես էին Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը հայտնվում և խոսում Ջոզեֆ Սմիթի հետ: Քննարկեք այս իրադարձության կարևորությունը:

Օգնեք կիրառել *(կիսվելով վկայություններով).* Թող երեխաները երգեն «Սրբազան Պուրակը» (*CS*, 87): Այնուհետև բերեք ձեր վկայությունը, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին: Հրավիրեք մի քանի երեխաների կիսվել Առաջին Տեսիլքի վերաբերյալ իրենց վկայությամբ:

Շաբաթ 3. Քահանայության իշխանությունը վերականգնվեց երկնային սուրհանդակների միջոցով:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգելով).* Հարցրեք երեխաներին, թե ինչպես նրանք կարող են հայտարարել ինչ-որ շատ կարևոր բան: Բացատրեք, որ շատ տարիներ առաջ փող էին հնչեցնում, երբ ինչ-որ կարևոր հայտարարություն էր արվում: Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը և պատկերացնել, որ իրենք լսում են փողերի ձայնը, մինչ դաշնակահարը նվագում է «Քահանայությունը վերականգնվել է» երգը (*CS,* 89): Խնդրեք երեխաներին երգել երգը և բացահայտել, թե ինչ կարևոր ուղերձ է այս երգը հայտարարում: Խնդրեք մի քանի երեխաների բացատրել, թե որն է երգի իմաստը:

Օգնեք հասկանալ *(լսելով հյուր խոսնակների).* Երեխաներին ցույց տվեք Ահարոնյան Քահանայության վերականգնման և Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնման նկարները: Հրավիրեք Ահարոնյան Քահանայության կրողի հակիրճ ձևով պատմել Ահարոնյան Քահանայության վերականգնման պատմությունը (տես ՎԵՈՒ 13, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.68–72): Այնուհետև հրավիրեք Մելքիսեդեկյան Քահանայության կրողի պատմել երեխաներին Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնման մասին (տես ՎԵՈՒ 27.12–13, Ջոզեֆ Սմիթ —Պատմություն 1.72): Կրկին ցուցադրեք նկարները և խնդրեք երեխաներին ասել նկարում պատկերված մարդկանց անունները:

Օգնեք կիրառել *(կիսվելով վկայություններով).* Թող յուրաքանչյուր դասարան թերթիկի վրա գրի մի բան, որ մենք ունենք այսօր Ահարոնյան Քահանայության վերականգնման արդյունքում (օրինակ՝ մկրտություն և հաղորդություն) և մի բան, որ մենք ունենք Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնման արդյունքում (օրինակ՝ հաստատում և հիվանդի համար օրհնություններ): Խնդրեք մի քանի երեխաների կիսվել իրենց գրածով: Ձեր երախտագիտությունն արտահայտեք այն օրհնությունների համար, որոնք գալիս են մեր Երկնային Հորից քահանայության վերականգնման արդյունքում:

Հյուր խոսնակները կարող են բազմազանություն և հետաքրքրություն ավելացնել Երեխաների Միությունում:

Շաբաթ 4. Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և վերականգնեց ավետարանի ճշմարտությունները:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(քննարկելով).* Նախքան դասը սկսելը մի թղթի վրա գրեք. «Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և վերականգնեց ավետարանի ճշմարտությունները» և թուղթը կտրտեք գլուխկոտրուկի տեսքով: Յուրաքանչյուր թերթիկի հակառակ կողմում գրեք մի անձնավորության անուն կամ ինչ-որ մի բան, որը կապ ունի Մորմոնի Գրքի թարգմանության հետ (օրինակ՝ Ջոզեֆ Սմիթ, Ուրիմ և Թումիմ, Մորոնի հրեշտակ, ոսկե թիթեղներ, Աստծո զորություն և Օլիվեր Քաուդերի): Յուրաքանչյուր խմբին տվեք գլուխկոտրուկի մասերից մեկը և խնդրեք նրանց քննարկել, թե ինչպես է գլուխկոտրուկի հակառակ կողմի առարկան կամ անձնավորությունը կապված Մորմոնի Գրքի թարգմանության հետ: Յուրաքանչյուր խմբին հրավիրեք առաջ գալ և կիսվել իրենց քննարկումներով և դնել գլուխկոտրուկի իրենց մասը գրատախտակի վրա: Երբ գլուխկոտրուկը լրացվի, միասին կարդացեք նախադասությունը:



Գլուխկոտրուկի համար սեղմեք այստեղ:

Օգնեք հասկանալ *(լսելով հյուր խոսնակի).* Հրավիրեք քահանայության կրողի ներկայանալ Ջոզեֆ Սմիթի դերում և պատմել, թե ինչպես նա թարգմանեց Մորմոնի Գիրքը: Նրան տվեք երեխաների շաբաթ 1-ի նկարած նկարներից մի քանիսը և խնդրեք նրան կիսվել, թե ինչպես վերականգնվեցին ավետարանի սկզբունքները Ջոզեֆ Սմիթի միջոցով: Նա կարող է կրել հասարակ հանդերձանք, ինչպես օրինակ սև ժապավենակապ փողկապ: Հրավիրեք նրան հանել հանդերձանքը և բերել իր վկայությունը Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ:

Օգնեք կիրառել *(կիսվելով մտքերով).* Խնդրեք երեխաներին կանգնել, եթե նրանք կարող են անվանել ավետարանական ճշմարտություն, որը կորել էր և վերականգնվել Ջոզեֆ Սմիթի միջոցով: Հրավիրեք մի քանի երեխաների կիսվել իրենց մտքերով: Կիսվեք ձեր վկայությամբ վերականգնված ավետարանի և Մորմոնի Գրքի վերաբերյալ:

Հարմարեցրեք վարժությունները. *Այս ծրագրի որոշ վարժություններ ավելի հարմար են ավագ տարիքի երեխաների համար, մյուսները՝ ավելի հարմար են կրտսեր տարիքի երեխաների համար: Մինչ դուք պլանավորում եք ձեր դասերը, հաշվի առեք երեխաների տարիքը և ունակությունները, որոնց դուք ուսուցանում եք:*

Մայիս

Մարգարեները սովորեցնում են մեզ ապրել վերականգնված ավետարանով

Երգ. Ձեր ընտրությամբ երգեք *Երեխաների Երգարանի* **երգերից մեկը:**

«Որովհետև Տէր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթէ չ'յայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին» (Ամովս Գ.7):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1 և 2. Ապրող մարգարեն առաջնորդում է Եկեղեցին Հիսուս Քրիստոսի ղեկավարության ներքո:

Ներկայացրեք վարդապետությունը *(նայելով նկարներ և խաղ խաղալով).* Ցուցադրեք ապրող մարգարեի նկարը: Խնդրեք մի քանի երեխաների հերթով առաջնորդել Երեխաների Խումբը պարզ գործողություններում, ինչպես օրինակ՝ ցատկոտել կամ ծափ տալ: Ցույց տվեք մարգարեի նկարը և բացատրեք, որ նա Եկեղեցու Նախագահն է և մենք պետք է հետևենք այն ամենին, ինչ նա խնդրում է մեզ անել: Հարցրեք. «Ո՞ւմ է հետևում մարգարեն»: Ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը և բացատրեք, որ մարգարեն աշխատում է Նրա ղեկավարության ներքո:

Օգնեք հասկանալ *(քննարկելով մարգարեի ուսմունքները).* Երեխաներին ցույց տվեք ամենավերջին համաժողովի ելույթները պարունակող *Ensign*-ը կամ *Լիահոնան*: Բացատրեք, որ գերագույն համաժողովի ժամանակ մարգարեն սովորեցնում է մեզ, թե ինչ է ուզում Հիսուս Քրիստոսը, որ մենք անենք: Մարգարեի ելույթներից ընտրեք նախադասություններ և հրավիրեք երեխաներին բարձրաձայն կարդալ դրանք:

Միասին կազմեք ցուցակ, որը կընդգրկի բաներ, որոնք կարող են երեխաներն անել մարգարեին հետևելու համար:

Օգնեք կիրառել *(նկար նկարելով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թերթիկ: Հրավիրեք նրանց ծալել այն մեջտեղից: Խնդրեք նրանց թերթիկի մի մասի վրա նկարել մարգարեի և մյուս մասի վրա գրել կամ նկարել, թե ինչպես կարող են հետևել մարգարեին: Հրավիրեք երեխաներին կանգնել և բռնել իրենց նկարները, մինչ նրանք կերգեն «Հետևիր մարգարեին» երգի կրկներգը (*CS,* 110–11):

2-րդ շաբաթ երեխաներին սովորեցրեք ինչ-որ բանի մասին, որ մարգարեն ուսուցանել է վերջին գերագույն համաժողովի ժամանակ: Մինչ դուք պլանավորեք վարժությունները, որոնք դուք կօգտագործեք, մտածեք, թե ինչպես դուք կներկայացնեք մարգարեի ուսմունքը և կօգնեք երեխաներին հասկանալ այն և կիրառել իրենց կյանքում:

Ամրապնդեք վարդապետությունը. *Ամբողջ ամսվա ընթացքում նշեք, որ ապրող մարգարեն սովորեցնում է մեզ, թե ինչ է Հիսուս Քրիստոսն ուզում, որ մենք իմանանք այսօր: Օգնեք երեխաներին հասկանալ, որ երբ մենք հետևում ենք մարգարեին, մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին:*

Շաբաթ 3. Մարգարեները սովորեցնում են ինձ տասանորդ վճարել:

Ներկայացրեք վարդապետությունը *(կարդալով սուրբ գրություն և լսելով պատմություն).* Բացատրեք, որ Մաղաքիան Հին Կտակարանի մարգարեներից է, ով սովորեցրեց մարդկանց վճարել իրենց տասանորդը: Խնդրեք մի երեխայի կարդալ Մաղաքիա Գ.10, մինչ մնացած երեխաները ուշադիր կլսեն, թե ինչ է Տերը խոստանում մեզ, եթե մենք տասանորդ վճարենք: Բացատրեք, որ «բանալ ձեզ համար երկնքի պատուհանները» վերաբերվում են օրհնություններին, որոնք մենք ստանում ենք, երբ մենք տասանորդ ենք վճարում:

Օգնեք հասկանալ *(առարկայական դասի դիտելով).* Հրավիրեք 10 երեխաների առաջ գալ: Յուրաքանչյուրին տվեք խնձոր (կամ այլ միրգ) և խնդրեք նրանց բարձր պահել իրենց խնձորները և ձևանալ խնձորի ծառեր: Թող մեկ այլ երեխա «հավաքի» խնձորները և դնի դրանք

զամբյուղի մեջ: Բացատրեք, որ տասանորդը մեր վաստակածի տասերորդ մասն է և սովորաբար վճարվում է դրամով, սակայն եղել են ժամանակներ, երբ մարդիկ վճարել են իրենց ունեցածով: Հարցրեք, թե քանի խնձոր պետք է երեխան տա եպիսկոպոսին տասանորդի համար:

Օգնեք կիրառել *(քննարկելով տասանորդը).* Ցույց տվեք տասանորդի թերթիկ և ծրար: Քննարկեք տասանորդ վճարելու գործընթացը: Հրավիրեք երեխաներին կիսվել, թե ինչպես են օրինվել նրանց ընտանիքները տասանորդ վճարելու արդյունքում: Վկայեք օրհնությունների մասին, որոնք գալիս են տասանորդ վճարելու մարգարեի խորհրդին հնազանդվելուց:

Շաբաթ 4. Մարգարեները սովորեցնում են ինձ ապրել Իմաստության Խոսքով:

Ներկայացնեք վարդապետությունը *(կարդալով սուրբ գրություն).* Խնդրեք երեխաներին պատմել մի այնպիսի դեպքի մասին, երբ ծնողները իրենց նախազգուշացրել են վտանգի մասին: Հարցրեք, նրանց, թե ինչու են իրենց ծնողները նախազգուշացնում նրանց: Բացատրեք, որ Երկնային Հայրը սիրում է մեզ և նախազգուշացնում է մեզ վտանգի մասին Իր մարգարեների միջոցով: Խնդրեք մի երեխայի կարդալ Վարդապետություն և Ուխտեր 89.4, և թող երեխաները լսեն, թե ինչպես է կոչվում այս նախազգուշացումը: Բացատրեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացավ այս նախազգուշացումը՝ Իմաստության Խոսքը, որպես հայտնություն Աստծո կողմից:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրություններ).* Նախօրոք տարբեր աթոռների տակ ամրացրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները. ՎևՈՒ 89.7, ՎևՈՒ 89.8, ՎևՈՒ 89.9, ՎևՈՒ 89.10, ՎևՈՒ 89.12, ՎևՈՒ 89.16: Բացատրեք, որ Երկնային Հայրն է տվել մեզ մեր ֆիզիկական մարմինները և Նա ուզում է, որ մենք հոգ տանենք դրանց համար. Նա տվել է մեզ Իմաստության Խոսքը, որպեսզի օգնի մեզ իմանալ, թե ինչը կօգնի մեր մարմիններին և ինչը կվնասի դրանց: Խնդրեք երեխաներին նայել իրենց աթոռների տակ սուրբ գրությունների հղումները գտնելու համար: Հրավիրեք յուրաքանչյուր երեխայի, ով գտնում է հատվածը, բարձրաձայն կարդալ սուրբ գրությունը: Քննարկեք յուրաքանչյուր հատվածի նշանակությունը: Պարզաբանեք, որ «թունդ խմիչքները» ալկոհոլն է, իսկ «տաք ըմպելիքները» սուրճն ու թեյն են:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալով).* Պարկի մեջ դրեք տարբեր ուտելիքների, ըմպելիքների և այլ առարկաների նկարներ, որոնք լավ կամ վատ են մարմնի համար: Հրավիրեք երեխաներից մեկին պարկից ընտրել մի նկար և ցույց տալ այն մնացած երեխաներին: Խնդրեք երեխաներին բացել իրենց բերանները, եթե առարկան լավն է կամ ծածկել իրենց բերանները, եթե առարկան վատն է: Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 89.18–21 և քննարկեք օրհնությունները, որոնք մենք ստանում ենք, երբ մենք հետևում ենք Իմաստության Խոսքով ապրելու մարգարեի խորհրդին:

Երեխաները կարող են սովորել զվարճալի վարժությունների միջոցով և տեղափոխվել տեղից տեղ, սակայն շարունակել ակնածալից լինել:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Այս ամսվա երգը կարող է լինել «Փառք քեզ Տեր մարգարեի համար» երգը (*Hymns, no.* 19): Հետևյալ մտքերը կարող են օգտագործվել ցանկացած երգ սովորեցնելիս: Չնայած այս օրինակում օգտագործվում են բառաշերտեր, որոշ երգերի ժամանակ կարող ենք օգտագործել նկարներ, երբ սովորեցնում ենք կրտսեր տարիքի երեխաներին:

Երգի յուրաքանչյուր արտահայտությունը գրեք տարբեր գույնի բառաշերտի վրա (կամ յուրաքանչյուր արտահայտությունը գրեք տարբեր գույներով): Յուրաքանչյուր արտահայտությունը բաժանեք երկու մասի: Երգը սովորեցնելու համար օգտագործեք հետևյալ եղանակներից մեկը.

1. Բառաշերտերը խառը դրեք սենյակով մեկ: Մինչ դուք և երեխաները կրկին ու կրկին երգում եք երգը, թույլ տվեք մի քանի երեխաների դասավորել արտահայտությունները ճիշտ հերթականությամբ: Երգեք և քննարկեք յուրաքանչյուր արտահայտությունը և հետո երգեք երգն ամբողջությամբ:
2. Սկսեք՝ունենալով բոլոր բառաշերտերը իրենց տեղում գրատախտակի վրա: Երեխաների հետ միասին երգեք երգը: Խնդրեք մի երեխայի հեռացնել բառաշերտերից մեկը և կրկին երգեք երգը: Կրկնեք այնքան, մինչև բոլոր բառաշերտերը հեռացվեն:
3. Գրատախտակին դրեք յուրաքանչյուր արտահայտության առաջին մասը ճիշտ հերթականությամբ, իսկ երկրորդ մասերը դրեք գրատախտակին խառը ձևով: Երգեք արտահայտության առաջին մասը և խնդրեք երեխաներին գտնել արտահայտության երկրորդ մասը և բացատրել, թե ինչ է նշանակում այդ արտահայտությունը:
4. Երեխաներին երկու խմբի բաժանեք: Թող խմբերից մեկը երգի յուրաքանչյուր արտահայտության առաջին մասը և մյուս խումբը երգի երկրորդ մասը: Փոխեք խմբերը և կրկնեք երգը:

Փառք քեզ, Տեր,	մարգարեի համար,
որ կառաջնորդի մեզ	այսօր:
Փառք քեզ	ավետարանի համար
Լուսավորող մեզ	իր լույսով:
Փառք քեզ	ամեն օրհնության համար,
որ տալիս ես	շռայլորեն:
Հաճույք է ու սեր	մեզ համար՝
Ծառայել քեզ	հնազանդորեն:

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

Հունիս

Ես կհետևեմ Երկնային Հոր ծրագրին՝ մկրտվելով և հաստատվելով

Երգ. «Երբ ես մկրտվեմ»
(*CS*, 103)

«Եկեք ինձ մոտ և մկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք ստանալ ձեր մեղքերին թողություն և լցվել Սուրբ Հոգով» (3 Նեփի 30.2):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Սեր ցուցաբերեք. *Ձեր սերը ցուցաբերելու համար նրանց հանդեպ, ում դուք ուսուցանում եք, անկեղծորեն գովեք այն երեխաներին, ովքեր մասնակցում են, եթե նույնիսկ նրանց տված պատասխանները հենց այն չեն, ինչ դուք էիք ակնկալում լսել:*

Շաբաթ 1. Ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին մկրտվելով և հաստատվելով և իմ մկրտության ուխտերը պահելով:

Նախօրոք տարբեր գույնի թղթերից կտրեք երկու մեծ ոտնահետքեր: Մեկի վրա գրեք «մկրտվելով և հաստատվելով» և մյուսի վրա՝ «և իմ մկրտության ուխտերը պահելով»: Երկու գույներով մի քանի ավելի փոքր ոտնահետքեր պատրաստեք: Հետևյալ արտահայտություններից մեկական գրեք առաջին գույնի ոտնահետքերի վրա. *8 տարեկան, ապաշխարել, հարցազրույց եպիսկոպոսի հետ, ընկղմում, քահանայության իշխանություն, ուխտ, սպիտակ հագուստներ, Սուրբ Հոգի:* Երկրորդ գույնի յուրաքանչյուր փոքրիկ ոտնահետքի վրա գրեք մեկական չափանիշ «Ավետարանի իմ չափանիշները» գրքույկից: Բոլոր փոքրիկ ոտնահետքերը խառը դրեք սենյակով մեկ:

Ներկայացրեք վարդապետությունը. Գրատախտակին գրեք «Ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին . . .»: Մեծ ոտնահետքերը հերթով դրեք գրատախտակին և միասին կարդացեք այն: Բացատրեք, որ սրանք անհրաժեշտ քայլեր են Երկնային Հոր ծրագրում: Եթե անհրաժեշտ է, օգնեք երեխաներին հասկանալ, թե ինչ է մկրտության ուխտը:

Օգնեք հասկանալ և կիրառել *(խաղալով համընկումների խաղ).* Մի երեխայի խնդրեք գտնել առաջին գույնի ոտնահետքերից մեկը: Խնդրեք նրան կարդալ ոտնահետքի վրայի բառը կամ արտահայտությունը և դնել այն գրատախտակին համապատասխան մեծ ոտնահետքի տակ: Հարցրեք երեխաներին, թե ինչ կապ ունի սա մկրտության և հաստատման հետ: Կրկնեք առաջին գույնի բոլոր ոտնահետքերի հետ:

Խնդրեք մի երեխայի գտնել երկրորդ գույնի մի ոտնահետք: Խնդրեք նրան կարդալ ոտնահետքի բառը կամ արտահայտությունը և դնել այն գրատախտակին համապատասխան մեծ ոտնահետքի տակ: Քննարկեք, թե ոտնահետքի վրա գրված ավետարանի չափանիշը ինչպես կօգնի երեխաներին պահել իրենց մկրտության ուխտերը: Կրկնեք մյուս ոտնահետքերով:



Մեղմեք այստեղ ոտնահետքերի համար:

Շաբաթ 2. Եթե ես ապրեմ արժանի ձևով, Սուրբ Հոգին կօգնի ինձ ընտրել ճիշտը:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգելով).* Հարցրեք երեխաներին, թե մկրտվելուց հետո մեզ ինչ պարգև է տրվել: Երգեք «Սուրբ Հոգին» (*CS*, 105) երգի երկրորդ տունը: Նախքան երգելը խնդրեք երեխաներին լսել հետևյալ հարցի պատասխանը. Ի՞նչ է մեզ օգնում անել Սուրբ Հոգին: Օգնեք երեխաներին հասկանալ, որ ցածր, մեղմ ձայնը Սուրբ Հոգին է և որ Նա օգնում է մեզ ընտրել ճիշտը:

Օգնեք հասկանալ *(առարկայական դասի դիտելով).* Բացատրեք, որ մենք պետք է սովորենք լսել Սուրբ Հոգու հուշումներին, ուշադրություն դարձնելով մեր մտքերին և մեր սրտերում ունեցած զգացմունքներին (տես ՎԱՈՒ 8.2): Թող մի երեխա ապակե տարայի մեջ կոպեկ դնի և թափահարի այն: Թող երեխաները ուշադրություն դարձնեն այն բանին, թե որքան պարզ նրանք կարողանում են լսել ձայնը: Թող երեխաները գդալով հող, բրինձ, ավազ կամ բամբակ լցնեն տարայի մեջ: Ամեն գդալից հետո թող երեխան տարան կրկին թափահարի, և թող երեխաները մեկնաբանեն, թե ինչպես է սա ազդում ձայնի վրա: Շարունակեք գդալներով ավելացնելն այնքան ժամանակ, մինչև որ երեխաներն այլևս չլսեն կոպեկի ձայնը: Սա նմանեցրեք Սուրբ

Վարդապետությունը առարկայի հետ կապելը կօգնի երեխաներին հիշել ուսուցանված դասը:

Հոգուն լսելու դժվարությանը, երբ մեր կյանքը լի է ուշադրությունը շեղող բաներով կամ մեղքով: Տարան դատարկեք և կրկին ցուցադրեք, թե որքան պարզ կարող է կոպեկը լսելի լինել: Վկայեք, որ պատվիրանները պահելը և մեր մեղքերից ապաշխարելը օգնում է մեզ լսել Սուրբ Հոգուն:

Օգնեք կիրառել *(կիսվելով մտքերով).* Երեխաներին բաժանեք խմբերի և թող յուրաքանչյուր խումբ իրար փոխանցի մի փոքրիկ առարկա մինչ դուք երգեք կամ ասեք «Սուրբ Հոգին» երգի բառերը: Անսպասելի կանգ առեք և թող յուրաքանչյուր երեխա, ով ունի առարկան, ասի մի բան, որ կարող է անել՝ Սուրբ Հոգուն ավելի պարզ լսելու համար: Ավարտեք՝ միասին երգելով «Սուրբ Հոգին» երգը:

Շաբաթ 3. Երբ ես հաղորդություն եմ ընդունում, ես վերանորոգում եմ իմ մկրտության ուխտերը:

Ներկայացրեք վարդապետությունը *(նայելով նկարները).* Ցուցադրեք մկրտության նկար և հաղորդության նկար և հարցրեք, թե ինչ կապ ունեն իրար հետ այդ նկարները: Հիշեցրեք երեխաներին, որ մենք ուխտեր ենք կապում

Երկնային Հոր հետ, երբ մենք մկրտվում ենք, և բացատրեք, որ երբ մենք հաղորդություն ենք ընդունում, մենք վերանորոգում ենք մեր մկրտության ուխտերը:

Օգնեք հասկանալ *(լսելով և քննարկելով).* Հրավիրեք երեխաներին մատով ցույց տալ իրենց կամ երկինքը, նշելու համար, թե ով է խոստում կապում, մինչ դուք կարդում եք հաղորդության աղոթքի հետևյալ հատվածները (տես ՎԱՈՒ 20.77). «իրենց վրա վերցնել անունը քո Որդու», «միշտ հիշել նրան», «պահել նրա պատվիրանները», «նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան»: Քննարկեք յուրաքանչյուր արտահայտության իմաստը:

Օգնեք կիրառել *(գործողություններ կատարելով).* Խնդրեք երեխաներին մտածել մի գործողություն, որը կհիշեցնի նրանց հաղորդության ժողովի ժամանակ լսած ուխտի յուրաքանչյուր մասը, ինչպես օրինակ՝ դնել իրենց ձեռքը իրենց սրտին (իրենց վրա վերցնել անունը քո Որդու), ցույց տալ իրենց ճակատը (միշտ հիշել նրան), գրքի տեսքով բացել իրենց ձեռքերը (պահել նրա պատվիրանները) և իրենց ձեռքերը փաթաթել իրենց շուրջը (նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան): Մի քանի անգամ կրկնեք բոլոր չորս խոստումները գործողությունների հետ միասին: Խրախուսեք երեխաներին իրենց մտքում կրկնել այս գործողությունները, երբ նրանք լսում են հաղորդության աղոթքները:

Շաբաթ 4. Եթե ես ապաշխարեմ, ես կարող եմ ներվել:

Ներկայացրեք վարդապետությունը *(դասավորելով բառերը ճիշտ հերթականությամբ).* Խնդրեք երեխաներին բացատրել *ապաշխարել* և *ներել* բառերի իմաստը: Յուրաքանչյուր խմբի տվեք մեկական ծրար, որոնց մեջ կլինեն առանձին թերթիկների վրա գրված հետևյալ բառերը. *Եթե, ես, ապաշխարեմ, ես, կարող, եմ, ներվել:* Հրավիրեք յուրաքանչյուր խմբին իրենց բառերը դնել ճիշտ հերթականությամբ: Երբ նրանք ավարտեն, թող բոլոր երեխաները միասին կրկնեն նախադասությունը:

Օգնեք հասկանալ *(բեմականացնելով սուրբ գրությունների պատմությունները).* Ձեր բառերով պատմեք անառակ որդու պատմությունը (տես Ղուկաս ԺԵ.11–24), օգտագործելով որքան հնարավոր է շատ գործողություններ (օրինակ՝ ցույց տվեք ձեր երկու մատները երկու տղաներին ներկայացնելու համար և տրորեք ձեր փորը սոված լինելը ներկայացնելու համար): Հրավիրեք երեխաներին լսել ձեր պատմությունը և անաղմուկ կրկնօրինակել ձեր գործողությունները: Ցույց տվեք անառակ որդուն ներկայացնող նկար և հարցրեք, թե ինչպես է այս պատմության հայրը նման մեր Երկնային Հորը: Բացատրեք, որ ճիշտ այդ հոր նման մեր Երկնային Հայրն էլ մեզ է սիրում և ցանկանում է, որ մենք վերադառնանք Նրա մոտ: Նա կների մեզ մեր կատարած բոլոր սխալները, եթե մենք ապաշխարենք:

Օգնեք կիրառել *(կարդալով սուրբ գրություն).* Հրավիրեք մի երեխայի կարդալ Մոսիա 26.30: Խնդրեք երեխաներին լսել, թե որքան հաճախ կարող է մեկը ներվել: Հրավիրեք նրանց լուռ մտածել, թե ինչ կանեն հաջորդ անգամ, երբ որևէ սխալ բան անեն:

Ներգրավեք բոլոր երեխաներին. *Երեխաները սովորում և հիշում են շարժման և գործողության միջոցով: Պատմություն պատմելիս նրանց ներգրավեք, թույլ տալով նրանց կատարել պարզ շարժումներ և գործողություններ:*

Հուլիս

Ընտանիքները Երկնային Հոր ծրագրի մի մասն են

Երգ. «Ընտանիքները կարող են հավերժ միանալ»
(CS, 188)

«Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից» («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», պարբերություն 7):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Երկնային Հայրը իմ համար ընտանիք գալու ծրագիր ունի:

Ներկայացրեք վարդապետությունը. Երեխաներին ցույց տվեք «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հայտարարությունը և բացատրեք, որ այն սովորեցնում է, որ Երկնային Հոր ծրագիրն է Իր զավակների համար, որ աշխարհ գան ընտանիքներով:

Օգնեք հասկանալ *(նկարներ դիտելով).* Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբի տվեք մի ընտանիքի նկար (օրինակ՝ Ադամն ու Եվան ուսուցանում են իրենց զավակներին [ԱԱԳ, համար 5], Քրիստոսը հարություն է տալիս Հայրոսի դստերը [ԱԱԳ, համար 41], Լեքիի ընտանիքը հասնում է խոստումի երկիր [ԱԱԳ, համար 71] և աղոթող ընտանիքը [ԱԱԳ, համար 112]): Հրավիրեք յուրաքանչյուր խմբի գտնել ընտանիքի անդամներին իրենց նկարում: Թող յուրաքանչյուր խումբ իր նկարը ցույց տա մնացած երեխաներին և ցույց տա հայրիկին, մայրիկին և երեխաներին: Խնդրեք երեխաներին իրենց մատերով ցույց տալ, թե քանի մարդ կա իրենց սեփական ընտանիքներում: Ասեք նրանց, որ իրենց ընտանիքները Երկնային Հոր ծրագրի մի մասն են:

Օգնեք կիրառել. Տղաներին խնդրեք կանգնել: Բացատրեք, որ նրանք կարող են մի օր լինել արդար ընտանիքի հայր: Հրավիրեք տղաներից մի քանիսին ասել որոշ բան, որ նրանք կարող են անել լավ հայր լինելու համար: Խնդրեք աղջիկներին կանգնել և բացատրեք, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է լինել արդար ընտանիքի մայր: Խնդրեք նրանցից մի քանիսին ասել մի բան, որ նրանք կարող են անել լավ մայր լինելու համար: Հրավիրեք բոլոր երեխաներին կիսվել մի բանով, որ նրանք կարող են անել երջանկություն բերելու համար ընտանիքներին, որոնք նրանք ունեն այժմ:

Երեխաներն ավելի լավ կսովորեն և երկար կհիշեն, եթե դուք մտքերը ներկայացնեք նկարներ և տեսողական այլ նյութեր օգտագործելով (տես ՈՒՉԱՄԿ, 176):

Հարմարեցրեք վարժությունները. *Շաբաթ 1-ի երկրորդ վարժությունը հարմար է կրտսեր տարիքի երեխաների համար: Ավագ տարիքի երեխաների համար եղանակներ ծրագրեք սուրբ գրությունների միջոցով ուսուցանելու այս ընտանիքների վերաբերյալ:*

Առարկայական դասերը կարող են օգտագործվել հետաքրքրություն առաջացնելու, երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու կամ ավետարանի սկզբունքը ներկայացնելու համար (տես ՈՒՉԱՄԿ, 164):

Շաբաթ 2. Ընտանեկան աղոթքը, ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրությունը և ընտանեկան երեկոն կարող են ամրացնել իմ ընտանիքը:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(առարկայական դասի դիտելով).* Թող մի երեխա բռնի փայտիկների մի կույտ: Բացատրեք, որ փայտիկները ներկայացնում են ընտանիքի անդամներին: Երեք բառաշերտերի վրա գրեք «ընտանեկան աղոթք», «ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրություն» և «ընտանեկան երեկո»: Հարցրեք երեխաներին, թե ինչպես են այս միջոցառումները ամրացնում կամ օգնում միասին պահել ընտանիքները: Հրավիրեք երեխաներին փայտիկների վրա թուղթ փաթաթել: Բացատրեք, որ այս միջոցառումները հրավիրում են Հոգուն մեր տուն և կյանք և մեզ ավելի են մոտեցնում Երկնային

Հորն ու Հիսուս Քրիստոսին, որն ավելի է ուժեղացնում մեր ընտանիքները;

Օգնեք կիրառել *(նկարներ նկարելով).* Երեխաներին տվեք թերթիկներ և հրավիրեք նրանց նկարել իրենց ընտանիքներում տեղի ունեցած միջոցառումները, որոնք ամրացրել են նրանց: Հրավիրեք նրանց իրենց նկարներով տանը կիսվել իրենց ընտանիքների հետ:

Շաբաթ 3. Քահանայությունը կարող է օրհնել և ամրացնել իմ ընտանիքը:

Ներկայացրեք վարդապետությունը *(խաղալով գուշակող խաղ).* Ասեք երեխաներին, որ դուք կասեք նրանց որոշ հուշող բառեր մի բանի վերաբերյալ, ինչը օրհնում և ամրացնում է ընտանիքները: Խնդրեք նրանց ձեռք բարձրացնել, երբ նրանք իմանան պատասխանը: Որոշ հուշող բառեր ասեք քահանայության վերաբերյալ, ինչպես օրինակ՝ «Մա ունեցող հայրերը կարող են օրհնել իրենց ընտանիքները» և «12 տարեկան տղաները կարող են ստանալ սա»: Երեխաների ճիշտ գուշակելուց հետո միասին ասեք. «Քահանայությունը կարող է օրհնել և ամրացնել իմ ընտանիքը»:



Օգնեք հասկանալ *(քննարկելով քահանայությունը).* Խնդրեք երեխաներին ասել մի քանի բաներ, որ քահանայություն կրողը կարող է անել (օրինակ՝ մկրտել, տալ Սուրբ Հոգու պարգևը, օրհնել հիվանդներին և բաժանել հաղորդությունը): Ցուցադրեք այս արարողությունների և օրհնությունների նկարները մինչ դուք քննարկում եք դրանք և օգնեք երեխաներին հասկանալ, թե ինչպես են դրանք օրհնում և ամրացնում ընտանիքներին: Ցուցադրեք տաճարի նկար: Բացատրեք, որ քահանայության մեծագույն օրհնություններից մեկն այն է, որ այն հնարավոր է դարձնում տաճար գնալ և կնքվել միասին որպես հավերժական ընտանիք:

Օգնեք կիրառել *(կիսվելով մտքերով).* Հրավիրեք մի քանի երեխաների կանգնել և կիսվել մեկ կամ երկու եղանակներով, որոնցով քահանայությունը օրհնել և ամրացրել է իրենց ընտանիքները: Խրախուսեք նրանց կիսվել իրենց մտքերով տանը՝ իրենց ընտանիքների հետ:

Շաբաթ 4. Երկնային Հայրն ուզում է, որ ես ամուսնանամ տաճարում և ունենամ հավերժական ընտանիք:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկարի դիտելով).* Ցուցադրեք տաճարի դիմաց իրենց հարսանեկան հագուստով մի զույգի նկար: Հարցրեք երեխաներին, թե ինչու է Երկնային Հայրը ցանկանում, որ մենք ամուսնանանք տաճարում: Բացատրեք, որ երբ մենք ամուսնանում ենք տաճարում, մեր ընտանիքները կարող են հավերժ լինել:

Օգնեք հասկանալ *(լսելով վկայություններ).* Հրավիրեք մի քանի ուսուցիչների, այդ թվում նաև զույգերի, կիսվել օրհնություններով, որոնք իրենք ստացել են տաճարի և տաճարային ամուսնության արդյունքում: Խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել հատուկ օրհնությունների վրա, մինչ ուսուցիչները կիսվում են իրենց մտքերով: Գրատախտակին գրեք այդ օրհնությունները:

Օգնեք կիրառել. Խնդրեք մի քանի երեխաների կանգնել և կիսվել, թե ինչու են նրանք ուզում ամուսնանալ տաճարում և ինչ կարող են նրանք անել այժմ այդ օրհնությանը պատրաստվելու համար:

Հուշում. *Երբ դուք սովորեցնեք հավերժական ընտանիքների մասին, նրբանկատորեն մոտեցեք այն երեխաներին, ովքեր իրենց տանը չունեն և՛ հայր, և՛ մայր: Նաև նրբանկատ եղեք այն երեխաների հանդեպ, ովքեր ունեն ծնողներ կամ քույրեր, եղբայրներ, որոնք ոչ ակտիվ են կամ ովքեր Եկեղեցու անդամներ չեն: Խրախուսեք բոլոր երեխաներին արժանիորեն ապրել և պատրաստվել, որ մի օր կարողանան ունենալ իրենց սեփական հավերժական ընտանիքները:*

Օգոստոս

Երգ. «Երեխայի աղոթքը»
(CS, 12–13)

Ակնածանք. *Երեխաները սովորում են շարժումների և խաղի միջոցով: Պլանավորեք, թե ինչպես կարող եք ակնածալից ձևով կատարել վարժություն, որը ներգրավում է շարժում, որպեսզի օգնի երեխաներին նախապատրաստվել հաջորդ վարժության համար: Խորհեք ակնածալից երգ երգելու մասին:*

Երեխաներն ինքներն կարող են լինել արդյունավետ և ներգրավիչ միջոցներ: Այս վարժությունում երեխաները հնարավորություն ունեն ցուցադրելու աղոթելու ճիշտ եղանակը:

Երկնային Հայրը լսում և պատասխանում է իմ աղոթքներին:

«Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին» (ՎԱՌ 112.10):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Սուրբ գրությունները սովորեցնում են ինձ, թե ինչպես աղոթել:

Ներկայացրեք վարդապետությունը. Բարձր պահեք սուրբ գրությունները և խնդրեք երեխաներին ձեզ ասել որոշ բաներ, որոնց մասին մենք սովորում ենք սուրբ գրություններից: Ասեք երեխաներին, որ բաներից մեկը, որ մենք կարող ենք սովորել սուրբ գրություններից, այն է, թե ինչպես պետք է աղոթենք:

Օգնեք հասկանալ և կիրառել *(լսելով պատմություն սուրբ գրություններից).* Պատմեք Ալմայի և Ամուլեկի պատմությունը, երբ նրանք սովորեցնում էին Զորամացիներին (տես Ալմա 31, 33–34): Հրավիրեք երեխաներին առանց խոսքերի ցուցադրել աղոթքի ճիշտ ձևը: Հարցրեք երեխաներին, թե ինչ է պատմությունը սովորեցնում աղոթքի մասին: Երեխաների պատասխանները գրեք գրատախտակին: Հրավիրեք երեխաներին քննարկել, թե ինչպես է պատմությունը վերաբերվում իրենց:

Շաբաթ 2. Երկնային Հայրն ուզում է, որ ես աղոթեմ Իրեն հաճախակի՝ ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(սուրբ գրություններ կարդալով).* Ասեք երեխաներին, որ նրանք կարող են աղոթել մեր Երկնային Հորը ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում: Թող նրանք բացեն Ալմա 33.3-9: Միասին կարդացեք հատվածները և թող երեխաները ձեռք բարձրացնեն, երբ ամեն անգամ լսեն հատված, որտեղ Զենոսը աղոթում էր: Գրեք այդ վայրերը գրատախտակի վրա: Օգնեք երեխաներին հասկանալ, թե այս վայրերը ինչ նշանակություն ունեն իրենց համար այսօր պատրաստելով բառաշերտեր դրանց ժամանակակից համարժեքներով (օրինակ՝ *վայր, որտեղ դուք ձեզ զգացել եք մոլորված կամ միայնակ* «անապատի» համար, *պարտեզ, խաղահրապարակ կամ զբոսայգի* «դաշտի» համար և *եկեղեցու մեր դասերն ու ժողովները* «ժողովների» համար): Խնդրեք երեխաներին համընկեցնել բառաշերտերը գրատախտակի համապատասխան բառերի հետ:

Օգնեք կիրառել *(քննարկելով աղոթքը).* Երեխաներին բաժանեք խմբերի և խնդրեք նրանց կիսվել փոքրաառություններով, երբ նրանք աղոթել են Զենոսի նշած վայրերում:

Շաբաթ 3 և 4. Աղոթքի պատասխանները գալիս են Երկնային Հորից տարբեր ճանապարհներով:

Ներկայացրեք վարդապետությունը *(խաղ խաղալով).* Նախօրոք գրատախտակին գրեք «Աղոթքի պատասխանները գալիս են Երկնային Հորից տարբեր ճանապարհներով» և յուրաքանչյուր բառը ծածկեք առանձին թերթիկներով: Թող մի երեխա վերցնի թերթիկներից մեկը, և խնդրեք երեխաներին գուշակել, թե ինչ նախադասություն է այնտեղ գրված: Կրկնեք այնքան, մինչև երեխաները կռահեն նախադասությունը և խնդրեք նրանց կարդալ այն միասին:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրություններ).* Ասեք երեխաներին, որ Ջոզեֆ Սմիթն աղոթեց, որ իմանար, թե որ եկեղեցուն միանար: Միասին կարդացեք Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17, որ իմանաք, թե ինչպես նրա աղոթքը պատասխանվեց (Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի կողմից այցելությամբ): Ասեք երեխաներին, որ Ալման աղոթեց, որ իր որդին՝ Ալմա կրտսերը, իմանար ճշմարտությունը: Միասին կարդացեք Մոսիա 27.11, որ իմանաք, թե ինչպես պատասխանվեց Ալմայի աղոթքը (հրեշտակ հայտնվեց Ալմա Կրտսերին): Բացատրեք, որ աղոթքի շատ պատասխաններ գալիս են այլ կերպ: Առանձին թերթիկների վրա գրեք հետևյալ սուրբ գրությունները, որոնք նկարագրում են, թե ինչպես կարող են աղոթքները պատասխանվել. ՎԵՈՒ 6.22-23 (խաղաղ զգացմունքների միջոցով), ՎԵՈՒ 8.2 (մեր մտքերի և մեր սրտի զգացմունքների միջոցով), Մոսիա 27.36 (այլ մարդկանց արարքների միջոցով) և 2Նեփի 32.3 (սուրբ գրությունների միջոցով): Թերթիկները դրեք տարայի մեջ: Թող մի երեխա հանի մեկը և կարդա այն: Բացեք սուրբ գրության հատվածը, միասին կարդացեք այն և հարցրեք երեխաներին, թե ինչ է սովորեցնում յուրաքանչյուր սուրբ գրությունը Երկնային Հոր կողմից աղոթքներին ստացվող պատասխանի վերաբերյալ:

Օգնեք կիրառել *(խելով պատմություններ).* Հրավիրեք չորս հյուրերի կիսվել պատմությամբ, որը կներկայացնի ճանապարհներից մեկը, որով աղոթքները պատասխանվում են: Օրինակները կարող են բերվել անձնական փորձառություններից, Եկեղեցու թերթերից կամ սուրբ գրություններից: Հրավիրեք երեխաներին տանը հարցնել իրենց ընտանիքներին այն պահերի մասին, երբ իրենց աղոթքները պատասխանվել են:

Պարզ կերպով ներկայացրեք վարդապետությունը, որը երեխաները սովորելու են ամեն շաբաթ: Հրավիրեք նրանց ասել այն ձեր հետ միասին միացյալ ժամի սկզբում:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «Երեխայի աղոթքը» (*CS,* 12-13), խորհեք հետևյալի մասին.

- Խնդրեք երեխաներին պատկերացնել, որ իրենք երկար ժամանակ եղել են իրենց ընտանիքից հեռու և վերջապես տուն են վերադառնում. նրանք բացում են դուռը և շրջապատվում են սիրով ու հանգստությամբ: Բացատրեք, որ աղոթքը նման է դեպի Երկնային Հայրը դուռ բացելուն. Նա իրոք այնտեղ է մեզ մխիթարելու և սիրելու համար, և Նա ցանկանում է լսել և պատասխանել յուրաքանչյուր երեխայի աղոթքին:
- Խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել «այնտեղ» և «աղոթք» բառերին, մինչ դուք երգում եք «Երեխայի աղոթքը» երգի առաջին երկու տողերը: Թող երեխաները ձեռքը տանեն դեպի իրենց ականջները, երբ լսեն բառերը: Հրավիրեք նրանց ձեր հետ միասին երգել այդ տողերը: Նույնը շարունակեք մնացած երգի հետ, խնդրելով երեխաներին, որ ուշադրություն դարձնեն յուրաքանչյուր տողի հանգավոր բառերի վրա:
- Երգեք երկրորդ տունը՝ արտահայտություն առ արտահայտություն և խնդրեք երեխաներին կրկնել յուրաքանչյուր արտահայտությունը, երբ դուք մատով նրանց ցույց տաք: Այնուհետև երեխաներին բաժանեք երկու խմբի և խնդրեք մի խմբին երգել յուրաքանչյուր արտահայտության առաջին մասը (օրինակ՝ «Նա») և մյուս խումբը թող ավարտի արտահայտությունը («այնտեղ է»): Հրավիրեք բոլոր երեխաներին կանգնել և երգել «Այսպիսիններին է արքայությունը»:

Սուրբ գրություններ. *Կարևոր է, որ երեխաները ավելի շատ ճշմարտությունները սովորեն սուրբ գրքերից: Մինչ դուք ուսուցանում եք սուրբ գրություններից, բռնեք դրանք ձեր ձեռքում:*

Սեպտեմբեր

Ես կծառայեմ Աստծուն իմ ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով

«Միրիր Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ սրտով, քո ողջ զորությամբ, մտքով և ուժով. և Հիսուս Քրիստոսի անունով ծառային նրան» (ՎԱՈՒ 59.5):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Դերերով խաղեր. *Դերերով խաղը կամ իրադրությունների բեմականացումը օգնում է երեխաներին կիրառել ավետարանի սկզբունքները իրական կյանքի իրադրություններում:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը սովորեցրել է մեզ, թե ինչպես ծառայել ուրիշներին:

Ներկայացրեք վարդապետությունը *(նայելով նկարներ).* Ցուցադրեք մի քանի նկարներ, որտեղ Հիսուսը ծառայում է ուրիշներին: Օրինակ, օգտագործեք *ՍՍԳ*-ի 41, 42, 46, 47 և 55 նկարները: Խնդրեք երեխաներին նկարագրել, թե ինչ է տեղի ունենում յուրաքանչյուր նկարում: Նշեք, որ Հիսուսը յուրաքանչյուր նկարում ծառայում է ուրիշներին: Գրատախտակին գրեք. «Հիսուս Քրիստոսը սովորեցրել է մեզ, թե ինչպես ծառայել ուրիշներին»:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրություններ և դերերով խաղ խաղալով).* Խնդրեք երեխաներին դերակատարման միջոցով հերթով ներկայացնել Մատթեոս ԻԵ.35-36-ում նկարագրված կարիքները: Օրինակ, երեխան կարող է ձևացնել, թե սոված է, ծարավ է, օտարական է կամ հիվանդ է: Խնդրեք մյուս երեխաներին գուշակել կարիքը և հետո դերակատարման միջոցով ներկայացնել, թե ինչպես կարող են ծառայել որևէ մեկին, ով ունի այդ կարիքը: Միասին կարդացեք Մատթեոս ԻԵ.35–40 և խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել Քրիստոսի այն խոսքերին, թե ում ենք մենք ծառայում, երբ մենք ծառայում ենք ուրիշներին:

Օգնեք կիրառել. Երեխաներին տվեք թերթիկներ և խնդրեք նրանց կազմել այն մարդկանց անունների ցուցակը կամ նկարել նրանց, ում նրանք կարող են ծառայել և ծառայության գործերը, որ նրանք կարող են կատարել այդ մարդկանց համար: Խրախուսեք նրանց տանը ցույց տալ իրենց թերթիկները իրենց ընտանիքներին:

Հասարակ հանդերձները, ինչպես օրինակ թիկնոցները և գլխարկները, բեմականացումները կարող են ավելի հետաքրքիր դարձնել: Բեմականացումները օգնում են երեխաներին ավելի մեծ հասկացողություն ձեռք բերել ավետարանի սկզբունքների և սուրբ գրությունների պատմությունների մասին:

Շաբաթ 2. Մարգարեներն ու առաքյալները ցույց են տալիս մեզ, թե ինչպես Ծառայել:

Ներկայացրեք վարդապետությունը. Ցուցադրեք Մովսեսի, Բենիամին Թագավորի, Ջոզեֆ Սմիթի և Թոմաս Ս. Մոնսոնի նկարները: Ասեք երեխաներին, որ այս մարգարեները, ճիշտ ինչպես բոլոր մարգարեներն ու առաքյալները, ցույց են տալիս մեզ, թե ինչպես ծառայել ուրիշներին:

Օգնեք հասկանալ *(խաղալով գուշակող խաղ).* Նախապատրաստեք հուշող բառեր այն բաների վերաբերյալ, թե ինչպես են Մովսեսը, Բենիամին Թագավորը, Ջոզեֆ Սմիթը և Թոմաս Ս. Մոնսոնը մեզ ծառայելու օրինակ ցույց տալիս: Օրինակ, Նախագահ Մոնսոնի վերաբերյալ հուշող բառերը կարող են լինել «Ես հաճախ այցելում էի իմ ծխի այրիներին», «Երբ ես փոքրիկ տղա էի, ես մեկ այլ տղայի տվեցի իմ սիրած խաղալիքներից մեկը» և «Ես հաճախ այցելում եմ մարդկանց, ովքեր հիվանդանոցում են»: Հուշումները նախապատրաստելու համար դուք կարող եք օգտագործել հետևյալ հղումները: Մովսես. Ելից Բ.16-17, 1 Նեփի 17.24-29: Բենիամին Թագավոր. Մոսիա 2.12-19: Ջոզեֆ Սմիթ. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.62, 67, ՎԱՈՒ 135.3: Թոմաս Ս. Մոնսոն. *Ensign,* Sept. 1994, 12–17; Dec. 1995, 2–4; Nov. 2006, 56–59:

Ընտրեք չորս երեխաներ այս մարգարեներին ներկայացնելու համար և հրավիրեք նրանցից մեկին կարդալ ձեր նախապատրաստած հուշումները: Մնացած երեխաներին հրավիրեք ձեռք բարձրացնել, եթե գիտեն, թե ով է այդ մարգա-

րեն: Այնուհետև թող նրանք գտնեն այդ մարգարեի նկարը: Նույնը կրկնեք մյուս մարգարեների համար:

Օգնեք կիրառել *(լսելով համաժողովը).* Հաջորդ շաբաթ երեխաներին հրավիրեք դիտել կամ լսել գերագույն համաժողովը: Խրախուսեք նրանց ուշադրություն դարձնել ուրիշներին ծառայելու վերաբերյալ պատմություններին: Նրանց հնարավորություն տվեք կիսվել իրենց սովորածով:

Շաբաթ 3 և 4. Երբ ես ծառայում եմ ուրիշներին, ես ծառայում եմ Աստծուն:

Ներկայացրեք վարդապետությունը *(անգիր սովորելով սուրբ գրություն).* Օգնեք երեխաներին անգիր սովորել Մոսիա 2.17-ի վերջին մասը՝ գրատախտակին գրելով. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»: Հրավիրեք երեխաներին երկու կամ երեք անգամ կրկնել այդ արտահայտությունը: Խնդրեք երեխաներից մեկին ջնջել մեկ կամ երկու բառ, և թող երեխաները նորից կրկնեն արտահայտությունը: Կրկնեք այնքան, մինչև որ գրատախտակին բառեր չմնան:

Օգնեք հասկանալ *(լսելով իրավիճակների ուսումնասիրություններ).* Պատրաստվելիս աղոթքով ուսումնասիրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի 2010թ.-ի ապրիլի համաժողովի «Դուք եք իմ ձեռքերը» ելույթը (տես *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2010, 68–70, 75): Հարցրեք երեխաներին, թե ինչպես ենք մենք ծառայում Աստծուն, երբ ծառայում ենք մեր շուրջը եղողներին (մենք անում ենք այն, ինչ Նա կաներ, եթե Նա այստեղ լիներ): Կիսվեք ծառայության վերաբերյալ պատմությամբ կամ անձնական փորձառությամբ և բացատրեք, թե ինչպես է այն օրհնել տվողին և ստացողին: (Դուք կարող եք ծառայության վերաբերյալ պատմություններ գտնել *Ընկեր* կամ *Լիահոնա* ամսագրերում): Նախապատրաստեք մի քանի իրավիճակների ուսումնասիրություններ (տես *ՈՒՀԱՄԿ,* 161–62), որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող են երեխաները ծառայել ուրիշներին: Օրինակ. «Անին դպրոցից տուն վերադառնալու ճանապարհին սայթաքեց և վայր ընկավ: Նրա գրքերն ու թղթերը ցրվեցին գետնով մեկ: Դավիթը կանգ առավ նրան օգնելու համար և հավաքեց նրա գրքերը»: «Մերիի հարևանը դժվարանում էր տուն տանել իր կատարած գնումները՝ մինչ նրա փոքրիկը լաց էր լինում: Մերին օգնեց նրան դրանք տուն տանել»: Խնդրեք երեխաներին բեմականացնել իրավիճակները և ասել, թե ում ծառայություն մատուցվեց (և ծառայությունը ստացողին, և Աստծուն):

Օգնեք հասկանալ և կիրառել *(խաղալով համընկումների խաղ).* Գտեք կամ նկարեք մարդկանց նկարներ, ում երեխաները կարող են ծառայել, ինչպես օրինակ ծնողի, ազգականի, տատիկի կամ պապիկի, ընկերոջ և հարևանի: Պատճենահանեք այս նկարները և դրանցով համընկումների խաղ խաղացեք (տես *ՈՒՀԱՄԿ,* 169): Երբ երեխան համընկում գտնի, հրավիրեք նրան ասել մի եղանակ, որով կարող է ծառայել նկարի անձնավորությանը: Երեխաների մտքերը գրի առեք գրատախտակի վրա: Ծառայելու վերաբերյալ որոշ մտքեր կարող եք գտնել *Երեխաների Խումբ 4-ում,* 166:

Վարդապետությունը մաքուր պահեք, *ուսուցանելով ավետարանի ճշմարտությունները և ոչ թե ուրիշ բաներ: Միշտ օգտագործեք Եկեղեցու արտադրած և հաստատած դասերի նյութերը (տես ՈՒՀԱՄԿ, 52):*

Խաղերը դասերը բազմազան են դարձնում, երեխաներին հնարավորություն են տալիս հաղորդակցվել իրար հետ և ամրապնդում են ավետարանի ուսուցանված սկզբունքը զվարճալի եղանակով:

Հոկտեմբեր

Ես կկիսվեմ ավետարանով Աստծո բոլոր զավակների հետ

«Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսանեն, եւ փառաւորեն ձեր Հօրը որ երկնքումն է» (Մատթեոս Ե.16):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Շաբաթ 1. Ավետարանով ապրելը օգնում է ինձ միսիոներ լինել այժմ:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(պատմություն լսելով).* Ցուցադրեք միսիոներների նկարներ: Հարցրեք երեխաներին, թե ինչ են անում միսիոներները: Կիսվեք հետևյալ պատմությամբ կամ *Ընկեր* կամ *Լիահոնա* ամսագրերում եղած պատմություններից մեկով. «Մի օր երկու միսիոներ թակեցին մի տան դուռ: Ջեյմս անունով մի կին բացեց դուռը: Միսիոներները ասացին նրան, որ իրենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց էին: Տիկին Ջեյմսը միսիոներներին ներս հրավիրեց և ասաց նրանց, որ նա կցանկանար ավելին իմանալ Եկեղեցու մասին: . . . Տիկին Ջեյմսն ասաց միսիոներներին, որ նա ապրել էր մի ընտանիքի հարևանությամբ, ովքեր եկեղեցու անդամ էին: Նա ասաց, որ այդ ընտանիքի երեխաները միշտ շատ քաղաքավարի ու բարի էին: Նրանք բոլորի հետ խաղում էին և լավ էին վերաբերվում այլ մարդկանց սեփականությանը: Տիկին Ջեյմսն ասաց, որ նա կցանկանար սովորել մի եկեղեցու մասին, որը սովորեցրել էր այդ երեխաներին լինել այդպիսի լավ հարևաններ» (*Երեխաների Խոսք 2,* 52): Հարցրեք. «Ինչպե՞ս էին տիկին Ջեյմսի հարևան երեխաները միսիոներ հանդիսանում»: Բացատրեք, որ երբ մենք ապրում ենք ավետարանով, մենք դառնում ենք միսիոներներ: Հրավիրեք երեխաներին ձեր հետ միասին ասել. «Ավետարանով ապրելը օգնում է ինձ միսիոներ լինել այժմ», շեշտեք *այժմ* բառը:

Վերստուգել. *Հիշեք երեխաներին տալ հնարավորություններ կիսվելու, թե ինչ են նրանք սովորել, երբ դիտել կամ լսել են գերագույն համաժողովը (տես Մեպտեմբեր, շաբաթ 2):*

Շաբաթ 2. Ավետարանով ապրելը օգնում է ինձ միսիոներ լինել այժմ:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով և քննարկելով ավետարանի չափանիշները).* Պատրաստեք 13 քարտ, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված կլինի «Ավետարանի իմ չափանիշները» գրքից մեկական չափանիշ (տես «Միացյալ ժամ. Պահիր պատվիրանները», *Ընկեր,* հունիս 2006, 36): Որոշ քարտեր տվեք երեխաներին և թող նրանք իրար փոխանցեն քարտերը մինչ բոլորը երգում են «Ես ուզում եմ միսիոներ լինել այժմ» (*ՀՏ,* 168): Երբ երգն ավարտվի, թող քարտ ունեցող յուրաքանչյուր երեխա բարձրաձայն կարդա չափանիշը և հետո կիսվի, թե այդ չափանիշով ապրելը ինչպես կօգնի իրեն միսիոներ լինել այժմ: Կրկնեք՝ ամեն անգամ օգտագործելով տարբեր քարտեր:

Օգնեք կիրառել *(նպատակներ դնելով).* Խնդրեք յուրաքանչյուր երեխայի ընտրել ավետարանի մի չափանիշ, որը նրանք կփորձեն ավելի լավ կիրառել եկող շաբաթ: Թող նրանք մի թերթիկի վրա գրեն կամ նկարեն չափանիշը և նայեն դրան ամեն օր որպես հիշեցում: Հաջորդ շաբաթ Երեխաների Խմբում հրավիրեք նրանց պատմել իրենց փորձառությունների մասին:

Վարդապետության մասին երգելը օգնում է երեխաներին սովորել և հիշել այն: Երեխաները նաև ավելի լավ են սովորում, երբ նրանք տեսնում են ցուցադրական նյութեր կամ վարժություն են կատարում երաժշտության հետ միասին:

Շաբաթ 3. Ես կարող եմ կիսվել ավետարանով իմ ընտանիքի և ընկերների հետ:

Ներկայացրեք վարդապետությունը *(լսելով պատմություն):* Նախօրոք կարդացեք Երեց Ռոբերտ Ք. Օուքսի 2000 թ. համաժողովի «Կիսվել ավետարանով» (տես *Ensign,* Nov. 2000, 81–82) ելույթը: Երեխաներին պատմեք նարնջի հյութի պատմությունը: Բացատրեք, որ ավետարանը շատ ավելի քաղցր է, քան նարնջի հյութը և որ մենք պետք է կիսվենք դրանով ուրիշների հետ: Թող երեխաներն ասեն. «Ես կարող եմ կիսվել ավետարանով իմ ընտանիքի և ընկերների հետ»:

Օգնեք հասկանալ *(լսելով հյուր խոսնակի).* Հրավիրեք մի միսիոների կամ վերադարձած միսիոների, որ խոսի այն մասին, թե ինչպես կարող են երեխաները կիսվել ավետարանով ուրիշների հետ (ինչպես օրինակ լավ օրինակ լինելով, ընկերներին Երեխաների Միություն հրավիրելով և իրենց վկայություններով կիսվելով) և թե ինչպես են ավետարանով կիսվելու նրանց ջանքերը օգնում Երկնային Հորը և միսիոներներին:

Օգնեք կիրառել *(լսելով պատմություն և կիսվելով մտքերով).* Հիշեցրեք երեխաներին, որ նրանք կարող են միսիոներ լինել այժմ: Կիսվեք, թե ինչպես եք դուք կամ մեկ ուրիշը, ում դուք գիտեք, կիսվել ավետարանով: Թող երեխաները հերթով կանգնեն և յուրաքանչյուրն ասի մեկ բառ «Ես կարող եմ կիսել ավետարանը» նախադասությունից: Հրավիրեք «ավետարանը» ասող երեխային մտածել, թե ինչպես նա կարող է կիսվել ավետարանով ընտանիքի կամ ընկերների հետ: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

Հուշում. *Որոշ շաբաթներ պարունակում են ավելի շատ մտքեր, քան դուք կարող եք ներկայացնել մեկ միացյալ ժամի ընթացքում: Աղոթքով ընտրեք վարժությունները, որոնք ամենահարմարն են ձեր Երեխաների Խմբի համար:*

Շաբաթ 4. Իմ վկայությունը ամրանում է, երբ ես կիսվում եմ ավետարանով:

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դաս դիտելով).* Մաքուր տարան լցրեք ջրով: Բացատրեք, որ ամեն անգամ, երբ մենք կիսվում ենք ավետարանով, մեր վկայությունը ավելի է ամրանում: Մի կաթիլ սննդի ներկ կաթացրեք տարայի մեջ: Բերեք մի քանի օրինակներ, թե մենք ինչպես կարող ենք կիսվել ավետարանով, ավելացնելով նույն գույնի սննդի ներկի ևս մեկական կաթիլ յուրաքանչյուր օրինակի համար: Նշեք, որ ճիշտ ինչպես գույնն է գնալով մգանում սննդի ներկի յուրաքանչյուր կաթիլից, մեր վկայությունը գնալով ամրանում է, երբ մենք ամեն անգամ կիսվում ենք ավետարանով:

Առարկայական դասերը հետաքրքրություն են առաջացնում և կենտրոնացնում են երեխաների ուշադրությունը ավետարանի սկզբունքների վրա:

Օգնեք հասկանալ *(քննարկելով վկայությունները).* Պարկի մեջ դրեք հետևյալը. Հիսուս Քրիստոսի նկարը, Ջոզեֆ Սմիթի նկարը, ներկայիս մարգարեի նկարը, Մորմոնի Գիրքը և «Ճշմարիտ Եկեղեցի» բառերը: Գրատախտակին գրեք

վկայություն բառը, և հարցրեք երեխաներին, թե ինչ է վկայությունը: Քննարկեք նրանց պատասխանները: Պատմեք հետևյալ պատմությունը: «Մի երիտասարդ աղջիկ վախենում էր բերել իր վկայությունը, քանի որ նա վստահ չէր իր զգացմունքների վրա: Սակայն նա գիտեր, որ դա կարևոր էր, ուստի մի օր նա քաջաբար կանգնեց և բերեց իր վկայությունը, թվարկելով հինգ բաներ, որոնց նա հավատում էր: Այդ ընթացքում նա լավ զգացողություն ունեցավ և գիտեր, որ իր վկայությունը ավելի էր ամրացել»: Թող երեխաները բացահայտեն հինգ բաները, որոնց վերաբերյալ նա վկայություն ուներ, ձեր պատրաստած պարկից հանելով դրանք: Քննարկեք դրանցից յուրաքանչյուրը և ցուցադրեք դրանք դասարանին:

Օգնեք կիրառել *(օրինակներ բերելով).* Թույլ տվեք յուրաքանչյուր երեխայի օրինակ բերել, թե ինչպես նա կարող է կիսվել ավետարանով: Ամեն անգամ, երբ մի երեխա մի օրինակ է բերում, ավելացրեք մի կաթիլ կերակրի ներկ տարայի մեջ, որպեսզի ցուցադրեք, որ ավետարանով կիսվելը կարող է ամրացնել վկայությունները: (Եթե ձեր Երեխաների Խումբը բավականին մեծ է, դուք կարող եք կատարել սա խմբերով, որպեսզի յուրաքանչյուր երեխա իր մտքերով կիսվելու հնարավորություն ունենա):

Հրավիրեք պատասխանել հարցերին. *Երբ երեխաները կիսվում են, թե ինչպես կարող են կիրառել վարդապետությունը, դա հաստատում է ուղերձն իրենց սրտերում և հրավիրում է Հոգին: Վարդապետությունն ուսուցանելուց հետո, երեխաներին հնարավորություն տվեք կիսվել, թե ինչպես կարող են կիրառել այն իրենց կյանքում:*

Նոյեմբեր

Մենք պետք է շնորհակալություն հայտնենք Աստծուն բոլոր բաների համար

«Եվ նա պատվիրեց նրանց, որ . . . ամեն օր նրանք պիտի գոհություն հայտնեն Տիրոջը՝ իրենց Աստծուն» (Մատիա 18.23):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

Երեխաների Խմբի երգերը *օգնում են երեխաներին հիշել վարդապետությունը: Խորհեք այնպիսի երգեր երգելու վերաբերյալ, որոնք ամրապնդում են այն, ինչը դուք ուսուցանել եք: Այս ամիս այդ երգերից մի քանիսը կարող են լինել հետևյալ երգերը. «Երեխաներն ամբողջ աշխարհում» (CS, 16–17), «Առողջության և ուժի համար» (CS, 21), «Կարծում եմ աշխարհը չքնաղ է» (CS, 230), «Երկնային Հայրը սիրում է ինձ» (CS, 228–29) և «Շնորհակալություն մեր Հորը» (CS, 20):*

Շաբաթ 1. Ես շնորհակալ եմ իմ մարմնի համար, և ես գիտեմ, որ այն տաճար է:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկարներ դիտելով և կարդալով սուրբ գրություն).* Ցուցադրեք մի երեխայի նկար և մի տաճարի նկար: Միասին բարձրաձայն կարդացեք Ա Կորնթացիս Գ.16: Հարցրեք. «Ի՞նչ ենք մենք սովորում մեր մարմինների վերաբերյալ այս սուրբ գրությունից»: Գրատախտակին գրեք. «Իմ մարմինը տաճար է»:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրությունները).* Քննարկեք, թե ինչ եղանակներով մենք կարող ենք ցույց տալ Երկնային Հորը, որ շնորհակալ ենք մեր մարմինների համար. օրինակ՝ մենք հոգ ենք տանում դրանց համար և մենք մաքուր ենք պահում դրանք: Բացատրեք, որ մարգարեները խորհուրդ են տվել մեզ հոգ տանել մեր մարմինների համար չծխելով, ալկոհոլ և անօրինական դեղամիջոցներ չօգտագործելով և դաջվածքներ չանելով: Երեխաներին խմբերի բաժանեք, և խնդրեք յուրաքանչյուր խմբին կարդալ և քննարկել հետևյալ սուրբ գրություններից մեկը կամ մի քանիսը. Վարդապետություն և Ուխտեր 88.124, 89.7, 8, 9, 10–11, 12, 16–17: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին կիսվել, թե ինչ են նրանք սովորել այս սուրբ գրություններց իրենց մարմինների համար հոգ տանելու վերաբերյալ:

Օգնեք կիրառել *(նպատակ դնելով).* Թող երեխաները գրեն կամ նկարեն մի բան, որն իրենք կանեն շաբաթվա ընտացքում, որպեսզի հոգ տանեն իրենց մարմինների համար:

Շաբաթ 2. Ես շնորհակալ եմ նյութական օրհնությունների համար:

Ներկայացրեք վարդապետությունը. Գրատախտակին գրեք. «Ես շնորհակալ եմ նյութական օրհնությունների համար»: Երեխաներին խնդրեք կրկնել նախադասությունը: Բացատրեք, որ նյութական օրհնությունները այն օրհնություններն են, որոնք մենք կարող ենք տեսնել, շոշափել, լսել, համտեսել կամ զգալ հոտը:

Օգնեք հասկանալ *(խաղալով գուշակող խաղ).* Ցուցադրեք առարկաներ կամ նկարներ, որոնք ներկայացնում են մեր որոշ նյութական օրհնությունները (օրինակ՝ մարմիններ, տներ, ուտելիք, ջուր, հագուստ, առողջություն, արև, լուսին, աստղեր, երկիր, կենդանիներ, բույսեր, ընտանիք, ընկերներ, խաղալիքներ, գրքեր և դպրոց): Օրհնություններից մեկը նկարագրող հուշող բառեր ասեք, և խնդրեք երեխաներին գուշակել, թե որ օրհնությունն եք դուք նկարագրում: Ավագ տարիքի երեխաների համար յուրաքանչյուր օրհնությունը գրեք առանձին թերթիկի վրա և թերթիկները դրեք տարայի մեջ: Հրավիրեք մի երեխայի ընտրել դրանցից մեկը և մնացած երեխաներին հուշող բառեր ասել դրա վերաբերյալ: Երբ երեխաները գուշակեն օրհնությունը, գրեք այն գրատախտակին և հարցրեք մի երեխայի, թե ինչու է նա երախտապարտ դրա համար:

Օգնեք կիրառել *(կիսվելով մտքերով).* Խնդրեք երեխաներին մտածել այն բանի վերաբերյալ, թե ինչ կարող են նրանք անել, որպեսզի արտահայտեն իրենց երախտագիտությունը ձեր քննարկած օրհնություններից մեկի համար: Խնդրեք մի քանի երեխաների կիսվել իրենց մտքերով:

Երեխաների սովորելն ավելի արդյունավետ կլինի, եթե ուսուցման տարբեր եղանակներ կիրառվեն: Ընտրեք այնպիսի վարժություններ և ուսուցման եղանակներ, որոնք ներգրավում են բոլոր երեխաներին:

Շաբաթ 3. Ես շնորհակալ եմ հոգևոր օրհնությունների համար:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրություններ).* Պատրաստեք նվեր Հիսուս Քրիստոսի նկարով, որի մեջ գրված կլինի հետևյալ սուրբ գրությունը. Մորոնի 10.8–17: Գրատախտակին գրեք. «Ես շնորհակալ եմ հոգևոր օրհնությունների համար»: Բացատրեք, որ կան շատ հոգևոր օրհնություններ, որոնք Տերը կարող է մեզ տալ: Նա տալիս է մեզ այս օրհնությունները Սուրբ Հոգու զորությամբ: Թող մի երեխա բացի նվերը և ցույց տա դրա պարունակությունը: Խնդրեք երեխաներին բացել այդ սուրբ գրությունը և գտնել հոգևոր օրհնությունները, որոնք Տերը կարող է մեզ տալ և գրեք դրանք գրատախտակին: Քննարկեք այս օրհնություններից մի քանիսը, և բացատրեք, որ մենք պետք է օգտագործենք դրանք ուրիշներին օգնելու համար:

Շաբաթ 4. Մենք պետք է շնորհակալություն հայտնենք Երկնային Հորը մեր բոլոր օրհնությունների համար:

Ներկայացրեք վարդապետությունը. Երեխաներին ցույց տվեք մեկ կամ երկու առարկաներ, որոնք ինչ-որ մեկն է տվել ձեզ: Բացատրեք, որ այս նվերները կարևոր են ձեր համար և որ դուք «Շնորհակալություն» եք ասել դրանց համար: Խնդրեք երեխաներին կիսվել այլ եղանակներով, որ կարող ենք ցուցադրել մեր երախտագիտությունը մեր ստացած նվերների համար: Հարցրեք երեխաներին, թե ում մենք պետք է շնորհակալություն հայտնենք մեր բոլոր օրհնությունների համար: Քննարկեք պատճառները, թե ինչու մենք պետք է շնորհակալություն հայտնենք Երկնային Հորը մեր բոլոր օրհնությունների համար:

Օգնեք հասկանալ *(ցուցակներ կազմելով).* Հինգ առանձին պարկերի մեջ դրեք թերթիկ, գրիչ և հետևյալ առարկաներից մեկը. Եկեղեցու ժողովատան նկարը, հագուստեղենի նկար, սուրբ գրությունները, ընտանիքի նկարը և Փրկչի նկարը: Երեխաներին բաժանեք խմբերի, և յուրաքանչյուր խմբին տվեք պարկերից մեկը: Թող յուրաքանչյուր խումբ նայի իր պարկի առարկային և թղթի վրա գրի մի եղանակ, որով նրանք կարող են երախտագիտություն արտահայտել դրա համար: Այնուհետև խնդրեք նրանց ետ դնել առարկան, թերթիկը և գրիչը պարկի մեջ և փոխանցել այն մեկ այլ խմբի: Թող յուրաքանչյուր խումբ հերթով վերցնի յուրաքանչյուր պարկը, և այնուհետև հրավիրեք յուրաքանչյուր խմբին կիսվել, թե ինչ է գրված իրենց պարկի թերթիկի վրա:

Օգնեք կիրառել *(կիսվելով մտքերով).* Խնդրեք մի քանի երեխաների կիսվել, թե նրանք ինչ սովորեցին այս վարժությունից և թե ինչ պետք է նրանք անեն իրենց կյանքում այն կիրառելու համար:

Գրատախտակ.
Գրատախտակը ամենահասանելի, ամենամատչելի ուսուցման միջոցներից մեկն է: Դուք կարող եք օգտագործել գրատախտակը երեխաների պատասխաններն ու մտքերը գրի առնելով:

Երբ փոքր խմբերում խնդրում եք երեխաներին կիսվել իրենց մտքերով, ավելի շատ երեխաներ են մասնակցելու հնարավորություն ունենում: Ուսուցիչները կարող են օգնել, որպեսզի երեխաները մասնակցեն և օգնեն պահպանել ակնածանքը:

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը կրկին կգա

«Ես գիտեմ, որ փրկիչս կենդանի է, և նա վերջը պիտի կանգնէ հողի վրա» (Հոբ ԺԹ. 25):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում: ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***



Շաբաթ 1. Մարգարեները մարգարեացել էին, որ Հիսուս Քրիստոսը աշխարհ կգար:

Օգնեք հասկանալ *(կարդալով սուրբ գրությունները).* Ցուցադրեք Եսայիայի, Նեփիի, Բենիամին Թագավորի, Աբինադիի, Ալմայի և Սամուել Լամանացու նկարները *Ավետարանի Արվեստի Գրքից* և *Երեխաների Խոսք 4* դասագրքի նկարների հավաքածուից: Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարեք հետևյալ սուրբ գրություններից մեկը. (1) Եսայիա Է.14, Թ.6, (2) 1 Նեփի 11.14–15, 20–21, (3) Մոսիա 3.5–8, (4) Մոսիա 15.1, (5) Ալմա 7.10–12 և (6) Հելաման 14.1–3: Խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել, թե որ մարգարեի մասին է խոսվում և ում մասին է նա վկայում: Խնդրեք յուրաքանչյուր խմբին ցույց տալ մարգարեի նկարը և ասել մյուս երեխաներին, թե ով է նա և ինչ է նա ասել: (Եթե կան կրտսեր տարիքի երեխաներ, օգնեք վեց երեխաների հագնել պարզ հանդերձներ վեց մարգարեներին ներկայացնելու համար: Հակիրճ պատմեք յուրաքանչյուր մարգարեի մասին և թե ինչ է յուրաքանչյուրն ասել Հիսուս Քրիստոսի ծննդյան և միսիայի վերաբերյալ: Բացատրեք, որ այս մարգարեներից յուրաքանչյուրը մարգարեացել է, որ Հիսուս Քրիստոսը աշխարհ կգա: Երգեք «Սամուելն ասաց մանուկ Հիսուսի մասին» երգը (*ՀՏ*, 36): Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը եկավ աշխարհ, ճիշտ ինչպես վկայել էին մարգարեները:

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը կրկին աշխարհ կգա:

Ներկայացրեք վարդապետությունը. Ցուցադրեք Երկրորդ Գալստյան նկար (*ԱԱԳ*, համար 66): Հիշեցրեք երեխաներին, որ Հիսուս Քրիստոսը առաջին անգամ աշխարհ եկավ որպես մանուկ Բեթլեհեմում: Բացատրեք, որ մենք սովորում ենք սուրբ գրություններից, որ Նա կրկին աշխարհ կգա:

Օգնեք հասկանալ *(խաղալով համընկումների խաղ).* Պատրաստեք հետևյալ սուրբ գրությունների համընկնող զույգեր՝ յուրաքանչյուր հողումը առանձին թերթիկի վրա. Մատթեոս ԺԶ.27, Մատթեոս ԻԴ.30, 36, 42, Գործք Ա.9–11, ՎԱՈՒ 36.8, ՎԱՈՒ 45.57–59, ՎԱՈՒ 88.95–98: Թերթիկները հակառակ ուղղությամբ դրեք գրատախտակի վրա: Թող երեխաները հերթով ընտրեն երկու թերթիկներ: Շրջեք թերթիկները, որպեսզի տեսնեք, թե արդյոք դրանք համընկնում են: Եթե դրանք չեն համընկնում, կրկին դրանք հետ շրջեք: Եթե դրանք համընկնում են, ցուցադրեք դրանք, որպեսզի տեսնեն սուրբ գրությունը և խնդրեք երեխաներին բացել այդ հողումը, որպեսզի տեսնենք, թե ինչ է այն սովորեցնում Քրիստոսի կրկին գալու վերաբերյալ: Կրկնեք այնքան, մինչև գտնեք բոլոր համընկնումները:

Շաբաթ 3. Ես կնախապատրաստվեմ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ կրկին ապրելու համար:

Ներկայացրեք վարդապետությունը *(խաղալով զուշակող խաղ).* Հրավիրեք երկու կամ երեք երեխայի մնջախաղի օգնությամբ ներկա-

Ուշադրություն գրավող վարժությունները, ինչպես մնջախաղն է, կարող են օգտագործվել հետաքրքրություն առաջացնելու համար և կօգնեն երեխաներին կենտրոնացնել իրենց ուշադրությունը դասի թեմայի վրա: Նրանք, ովքեր չեն մասնակցում կներգրավվեն, երբ նրանք դիտեն մյուս երեխաներին:

Հարմարեցրեք վարժությունները. *Հարմարեցրեք վարժությունները ձեր ունեցած միջոցների հետ և ձեր Երեխաների Խմբի երեխաների հետ: Օրինակ, շաբաթ 3-ի կիրառման վարժության համար իրենց մտքերը թերթիկի վրա գրելու փոխարեն դուք կարող եք հրավիրել երեխաներին բարձրացնել իրենց մի մատը յուրաքանչյուր բանի համար, որ նրանք կարող են անել պատրաստվելու համար:*

յացնել, թե իրենք նախապատրաստվում են քնել, եկեղեցի գնալ կամ երկար ճանապարհորդության գնալ: Խնդրեք մյուս երեխաներին կռահել, թե ինչ են նրանք կատարում: Երեխաների հետ քննարկեք, թե ինչ կպատահեր, եթե մենք չնախապատրաստվեինք այս բաները անելու համար: Բացատրեք, որ մի կարևոր բան, ինչի համար մենք պետք է նախապատրաստվենք, Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ կրկին ապրելն է:

Օգնեք հասկանալ *(երգեր երգելով).* Երգեք «Զավակն եմ Աստծո» (*CS,* 2) երգի երրորդ տողը և հրավիրեք երեխաներին ուշադիր լսել, թե ինչպես մենք կարող ենք նախապատրաստվել Երկնային Հոր հետ կրկին ապրելու համար: Հրավիրեք երեխաներին կանգնել և կրկին երգել «Ու թե Իր կամքը կատարեմ» արտահայտությունը: Բացատրեք, որ Երեխաների Խմբի որոշ երգեր հիշեցնում են մեզ բաներ, որ մենք կարող ենք անել, որպեսզի նախապատրաստվենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ կրկին ապրելու համար (օրինակ, «Կհետևեմ Աստծո ծրագրին» [*CS,* 164–65], «Պահիր պատվիրանները» [*CS,* 146–47], «Բարին ինձնից պիտ գա» [*CS,* 145] և «Երբ ես մկրտվեմ» [*CS,* 103]): Թող դաշնակահարը նվագի մի քանի նոտա այս երգերից որևէ մեկից, և խնդրեք երեխաներին գուշակել, թե որ երգն է դա: Հրավիրեք երեխաներին երգել երգը և կանգնել, երբ նրանք երգեն այն մասին, թե ինչպես կարող են նախապատրաստվել Երկնային Հոր հետ ապրելու համար: Կրկնեք մյուս երգերով:

Օգնեք կիրառել *(նկարելով).* Թող երեխաները մտածեն, թե ինչպես կարող են նախապատրաստվել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ ապրելու համար: Յուրաքանչյուրին տվեք մեկական թերթիկ և հրավիրեք նրանց գծել իրենց ձեռքի գծապատկերը: Այնուհետև խնդրեք նրանց յուրաքանչյուր մատի գծապատկերի մեջ գրել կամ նկարել մի բան, որը նրանք կարող են անել նախապատրաստվելու համար: Խնդրեք երեխաներին ընտրել այդ բաներից մեկը այս շաբաթ դրա վրա աշխատելու համար: Ասեք նրանց, որ դուք հաջորդ կիրակի խնդրելու եք նրանց կիսվել, թե ինչ են նրանք արել:

Ամենապանի սկզբունքը **գրելը** *երեխաներին կօգնի հիշել այն:*

Շաբաթ 4. Ես ունեմ վկայություն, որ ես Աստծո զավակն եմ:

Ներկայացրեք վարդապետությունը *(խաղալով գուշակող խաղ).* Գրատախտակին գրեք «Ես ունեմ _____»: Ասեք երեխաներին լսել հետևյալ հուշումները և ծալել իրենց ձեռքերը և կանգնել, երբ նրանք մտածեն, որ կարող են լրացնել բացթողումը.

- Այն օգնում է մեզ զգալ լավ, ուրախ կամ ներքուստ ջերմություն:
- Սուրբ Հոգին է այն մեզ տալիս:
- Այն օգնում է մեզ ցանկանալ ճիշտ ընտրություններ կատարել:
- Մենք կարող ենք կիսել այն ուրիշների հետ, երբ մենք ելույթ ենք ունենում Երեխաների Խմբում, ընտանեկան երեկոյի ժամանակ և ծոմապահության և վկայության ժողովի ժամանակ:

Հարցրեք. «Ի՞նչ է այս հրաշալի բանը»: Բացթողման տեղում լրացրեք *վկայություն* բառը և ասեք երեխաներին, որ նրանք կարող են ունենալ վկայություն, որ իրենք Աստծո զավակ են:

Օգնեք հասկանալ *(երգ երգելով).* Երեխաներին հրավիրեք երգել «Զավակն եմ ես Աստծո» (*CS,* 2–3) երգը և խնդրեք նրանց մտածել, թե ինչպես են նրանք ներքուստ զգում, մինչ երգում են: Խնդրեք մի քանի երեխաների կիսվել իրենց զգացմունքներով: Բացատրեք, որ իրենց ունեցած լավ զգացողությունները եկել են Սուրբ Հոգուց, որ ասել է իրենց, որ իրենք իրոք Աստծո զավակներ են: Բացատրեք, որ իմանալը, որ սա ճիշտ է, նշանակում է վկայություն ունենալ: Բացատրեք, որ շատ եղանակներ կան, որոնց միջոցով մենք կարող ենք իմանալ, որ մենք Աստծո զավակ ենք: Հարցրեք. «Ինչպե՞ս դուք գիտեք, որ դուք Աստծո զավակ եք»:

Օգնեք կիրառել *(լսելով վկայությունները).* Երեխաներին հարցրեք. «Ինչու՞ է կարևոր վկայություն ունենալ, որ մենք Աստծո զավակ ենք: Ինչպե՞ս է վկայություն ունենալը օգնում մեզ ճիշտ որոշումներ կայացնել»: Կիսվեք ձեր վկայությամբ և հրավիրեք մի քանի երեխաների և մեծերի կիսվել իրենց վկայություններով, որ մենք բոլորս Աստծո զավակներն ենք:

Վկայեք. *Երբ դուք ոգեշնչում զգաք, բերեք ձեր վկայությունը ձեր ուսուցանած վարդապետության վերաբերյալ: Սուրբ Հոգին կարող է վկայել յուրաքանչյուր երեխայի ձեր ասածի ճշմարտացիության վերաբերյալ: Ձեր վկայությունը օգնում է երեխաներին զգալ Հոգին և մղում է նրանց ամրացնել իրենց վկայությունները:*

Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում

Երեխաների Խմբում երաժշտության նպատակը երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը ուսուցանելն է: Մանկական երգերը ավետարանը սովորելը ավելի հաճելի են դարձնում, հրավիրում են Հոգին և ստեղծում են ակնածալից մթնոլորտ, որը հիանալի է սովորելու համար (տես Handbook 2. Administering the Church *[2010], 11.2.4):*

Երբ պատրաստվում եք երգ սովորեցնել, հարցրեք ինքներդ ձեզ. Ինչպե՞ս ես կարող եմ գրավել և պահել երեխաների ուշադրությունը: Ի՞նչ հարցեր կարող եմ ես տալ օգնելու երեխաներին հասկանալ երգի ավետարանական պատգամը: Ի՞նչ մեթոդներ ես կարող եմ օգտագործել այս երգը սովորեցնելու համար: Ահա մի քանի մեթոդներ, որոնք դուք կարող եք փորձել: Օրինակները կօգնեն ձեզ այս ծրագրում առաջարկված երգերն ուսուցանելիս: Լրացուցիչ մտքերի համար այցելեք LDS.org կայք, Serving in the Church-ի Primary բաժինը և 2010, 2011 և 2012-ի ծրագրերի «Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում» բաժինները:

Հարմարեցրեք վարժությունները. *Այստեղ նկարագրված ուսուցանման եղանակներից ունակ հարմար կլինեն կրտսեր տարիքի երեխաների համար: Ձեր ուսուցանման մեթոդները հարմարեցրեք տարբեր տարիքի երեխաներին, որպեսզի նրանք բոլորն էլ ներգրավվեն սովորելու և երգելու մեջ:*

Հատուկ ուշադրություն դարձրեք երգի ավետարանի սկզբունքի վրա:

Խորհեք հետևյալ գաղափարները, երբ դուք սովորեցնեք «Ընտանիքները կարող են լինել հավերժ միասին» երգը (*CS*, 188): Խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել Երկնային Հոր ծրագրի մասի վրա, երբ դուք երգեք երգի առաջին տողը և կանգնել, երբ նրանք իմանան, թե որն է այն (ընտանիք): Հրավիրեք երեխաներին երգել այդ տողը ձեր հետ միասին: Նշեք, որ «այստեղ» և «սիրում են ինձ» արտահայտությունների եղանակները նույնանման են և խնդրեք երեխաներին երգել այդ բառերը: Խնդրեք նրանց լսել երգի հաջորդ մասը, որպեսզի պարզեն, թե որքան ժամանակ կարող են կիսել իրենց կյանքը իրենց ընտանիքի հետ: Երգեք երկրորդ տողը՝ շեշտելով «հավերժ» բառը: Հրավիրեք երեխաներին ձեր հետ միասին երգել այդ տողը և հետո երգեք երկու տողերը միասին: Խնդրեք երեխաներին կրկներգի մեջ ևս ուշադրություն դարձնել «հավերժ» բառի վրա: Երգեք «Ընտանիքները կարող են լինել հավերժ միասին» և թող նրանք արձագանքեն ձեզ նույն բառերը: Երգեք, և թող նրանք կրկնեն «Աստծո ծրագիրն է դա» բառերը: Հարցրեք, թե որն է Երկնային Հոր ծրագիրը, հիշեցնելով երեխաներին, որ Նա ուզում է, որ նրանք ամուսնանան տաճարում և ունենան իրենց սեփական հավերժական ընտանիքները: Ավարտեք կրկներգի ուսուցանումը երգելով արտահայտությունները և հրավիրելով երեխաներին կրկնել դրանք:



Որպեսզի օգնեք երեխաներին սովորել երգի երաժշտությունը «ձեր ձեռքը պահեք հորիզոնական դիրքում, և մինչ երգում եք բառերը, ձեր ձեռքը վերև բարձրացրեք ավելի բարձր տոնայնությունները նշելու համար և ցած իջեցրեք, նշելու համար բարձր տոնայնությունները» (ՈՒՉԱՄԿ, 174):

Պարապեք. *Երգն արդյունավետ ուսուցանելու համար դուք պետք է ինքներդ իմանաք երգը: Տանը պարապեք, որ երբ դուք սովորեցնեք երգը, կարողանաք նայել նրանց:*

Օգտագործեք ցուցադրական նյութեր, որոնք կօգնեն երեխաներին սովորել և հիշել բառերը:

Սեղմեք այստեղ ցուցադրական նյութերի համար

Խորհեք հետևյալ մտքերի վերաբերյալ, մինչ ուսուցանում եք «Թե Փրկիչը կանգնի կողքիս» (էջ 28 այս ծրագրում) երգը.

- Երգի յուրաքանչյուր արտահայտության համար բառաշերտ պատրաստեք և գտեք նկար, որը ներկայացնում է յուրաքանչյուր բառաշերտը: Նկարները տեղադրեք սենյակի մի կողմում և բառաշերտերը մյուս կողմում: Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես նրանք կարող է այլ կերպ վարվեն, եթե նրանք կարողանան տեսնել Փրկչին իրենց կողքին կանգնած: Երգեք երգը և խնդրեք երեխաներին գտնել նկարների համապատասխան բառաշերտերը:
- Թող երեխաները երգեն երգը ձեզ հետ միասին, մինչ դուք մատնացույց կանեք նկարներին:
- Յուրաքանչյուր խմբի տվեք մեկական արտահայտություն և թող կանգնած երգեն, և հետո փոխեք արտահայտությունները այնքան ժամանակ, մինչև յուրաքանչյուր խումբ երգի յուրաքանչյուր արտահայտությունը:

Վկայեք. *Երեխաներին հակիրճ ձևով վկայեք մանկական երգերում եղող ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ: Օգնեք երեխաներին հասկանալ, որ երգելու միջոցով նրանք կարող են վկայություն բերել և զգալ Հոգին:*

Պատշաճ վարժություններ օգտագործեք երեխաներին ներգրավվելու համար և օգնեք նրանց հիշել երգը:

Խորհեք հետևյալ գաղափարների շուրջ, երբ դուք սովորեցնեք «Երկնային Հայրս սիրում է ինձ» (*CS,* 228–29) երգը: Հարցրեք երեխաներին, թե ինչպես են նրանք արտահայտել իրենց սերը իրենց ընտանիքի անդամների հանդեպ: Հարցրեք, թե ինչպես է Երկնային Հայրը Իր սերը արտահայտել իրենց հանդեպ: Բացատրեք, որ Նա ստեղծել է այս գեղեցիկ աշխարհը նրանց համար, քանի որ Նա սիրում է նրանց: Երգեք երգը երեխաների համար առանձին արտահայտություններով, և հրավիրեք նրանց երգել այն ձեր հետ միասին, մինչ նրանք վերակերպավորում են յուրաքանչյուր մասը. ծիտիկները երգում են, նայում են երկնքին, անձրևը կաթում է նրանց դեմքին և այսպես շարունակ: Երկրորդ տան համար հրավիրեք նրանց անել այնպիսի վարժություններ, ինչպես իրենց աչքերը ցույց տալը, թիթեռնիկներ ձևանալը և իրենց ձեռքերը ականջների հետևում պահելը: Հրավիրեք նրանց գրկել իրենց, երբ երգեն «Նա ինձ կյանք տվեց», հետո ցույց տալ իրենց գլուխները («խելք»), դնել իրենց ձեռքերը իրենց սրտերին («սիրտ»), և խոնարհել իրենց գլուխները և ծալել իրենց ձեռքերը («Շնորհակալ եմ Նրան»): Խնդրեք նրանց իրենց ձեռքերը կրկին դնել իրենց սրտին, մինչ նրանք կերգեն «Օ~, գիտեմ, Հայրս սիրում է ինձ»:

Կրկնողությունը *օգնում է երեխաներին սովորել նոր երգեր: Երգերը կրկնեք տարբեր եղանակներով, ինչպես օրինակ շշնջալով, կիսաձայն երգելով, ռիթմը ծափ տալով, տեմպը փոփոխելով կամ նստած ու կանգնած երգելով:*

Թե Փրկիչը կանգնի կողքիս

Մտախոհ ♩ = 90–100

Խոսք և երաժշտություն՝ Սալի Դեֆորդի

1. Ե-թե Փրը - կիչն կող-քիս լի - ներ, կա-ՆԵԻ՞ այն, ինչ ա - նում եմ: Կը - հի
2. Ե-թե Փրը - կիչն կող-քիս լի - ներ, կա-սեի՞ այն, ինչ ա - սում եմ: Կա-սեի
3. — Նա կանգ-նած է կող-քիս, ան-գամ երբ չեմ տես-նում Նրան: Քա - նի

շեի՞ պատ-վի-ռան - ներն ու ճըշ-մա - ռիտ ես կը - լի - նեի: Կը - հե - տե - վեի՞ Նը-ռան
բա - ռի ու ճիշտ խոս-քեր, ե - թե Նա ինձ մոտ լի - ներ: Կը-կիս-վեի՞ ա - վե - տա
որ Նա սի-ռում է ինձ, ա - պա - հով ձեռ-քում եմ ես: Եվ ես կը - լի - նեմ այն

ու էլ ա - վե - լի ար - դար կապ - ռեի, Ե-թե Փրը - կի - չը կող-քիս լի - ներ և
ռա-նով, կը - խո - սեի պատ-կա - ռան - քով, Ե-թե Փրը - կի - չը կող-քիս լի - ներ և
պես, ինչ - պես Նա կու - զե - նար տես - նել, Ե-թե Փրը - կի - չը կող-քիս լի - ներ և

1. 2.

ինձ միշտ հե - տե - վեր:

3.

ինձ միշտ հե - տե - վեր:

Ped. ✻

Copyright © 1991 by Sally DeFord. Բոլոր իրավունքները վերապահված են:
Այս երգը կարելի է բազմացնել միայն առանձին ոչառևտրային նպատակներով
եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:
Այս ծանուցումը պետք է ներառված լինի յուրաքանչյուր օրինակի մեջ:

Հաշմանդամ երեխաների ուսուցանում

Փրկիչը սովորեցրել է. «Բոլոր քո զավակները պիտի ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը» (3 Նեփի 22.13):

Երեխաների Խմբի ղեկավարները կարևոր պարտականություն ունեն՝ սովորեցնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը բոլոր երեխաներին, ներառյալ նրանց, ովքեր հաշմանդամ են: Երեխաների Խումբը մի վայր է, որտեղ յուրաքանչյուր երեխա պետք է ողջունվի, սիրվի, կրթվի ու ներգրավվի: Նման մթնոլորտում բոլոր երեխաների համար ավելի հեշտ է հասկանալ մեր Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի սերը, և զգալ ու ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունը:

Յուրաքանչյուր երեխա թանկ է Աստծո համար: Յուրաքանչյուրն ունի սիրո, հարգանքի ու աջակցության կարիք:

Խորհրդակցեք ուրիշների հետ, երբ դուք աշխատում եք հոգալ ձեր Երեխաների Խմբի հաշմանդամ երեխաների կարիքները:

1. **Խորհրդակցեք երեխայի ծնողների հետ:** Ծնողները սովորաբար ավելի լավ գիտեն իրենց երեխային, քան ուրիշները: Նրանք կարող են ձեզ սովորեցնել, թե ինչպես ընդառաջ գնալ նրա կարիքներին, գրավել ուշադրությունը և կծանոթացնեն սովորելու սիրած ձևերին: Օրինակ, որոշ երեխաներ հատկապես լավ են արձագանքում երաժշտությանը, մյուսները՝ պատմություններին, նկարներին, սուրբ գրություններին կամ շարժումներին: Օգտագործեք ուսուցման բազմազան մեթոդներ, համոզվելով, որ օգտագործում եք եղանակներ, որոնք լավագույնն են յուրաքանչյուր երեխայի սովորելու համար:

2. **Խորհրդակցեք Երեխաների Խմբի մյուս ղեկավարների ու ուսուցիչների հետ:** Աղոթեք և միասին աշխատեք, որ գտնեք ճանապարհներ, թե ինչպես օգնեք յուրաքանչյուր երեխայի սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և սիրված զգալ:

3. **Խորհրդակցեք ճյուղի խորհրդատուի հետ:** Քահանայությունը և այլ օժանդակների ղեկավարներ կարող է մտքեր ունենան հատուկ կարիքներ ունեցող երեխաներին օգնելու համար: Մի ծխում, քահանայապետերի խումբը առաջարկել է «Երեխաների Խմբին պապիկ» տալ ամեն շաբաթ, որը կնստի երիտասարդ տղայի հետ, որը աուտիզմ ունի: (Լավ կլինի, որ ամեն շաբաթ լինի նույն մարդը): Սա օգնեց տղային կենտրոնանալ դասի վրա և սիրված զգալ:

Երեց Մ. Ռասսել Բալլարդը սովորեցրել է. «Ակնհայտ է, որ մեզնից նրանց, ում վստահված են թանկարժեք երեխաներ, տրվել է սուրբ, վեհանձն պատասխանատվություն, որովհետև մեզ է, որ Աստված ընտրել է, որ այսօրվա երեխաներին շրջապատենք սիրով և հավատի կրակով, և հասկացողությամբ, թե իրենք ովքեր են» (“Great Shall Be the Peace of Thy Children,” *Ensign,* Apr. 1994, 60):

Լրացուցիչ տեղեկություններ համար, *թե ինչպես օգնել հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, տես* ՈՒՉԱՄԿ, *38–39 և disabilities.lds.org:*



Սեղմեք այստեղ կերպարների համար:

Որոշ հաշմանդամ երեխաներ լավ են արձագանքում ցուցադրական հուշումներին: Օգտագործեք այնպիսի ազդանշաններ, ինչպիսին են այստեղ ցուցադրվածները, որոնք ցույց են տալիս, թե երբ է աղոթելու ժամը, լռելու կամ երգելու ժամը:

Հարմարեցնել դասերը. *Դուք միգուցե կարիք ունենաք հարմարեցնել ձեր միացյալ ժամերը հաշմանդամ երեխաների համար: Տես sharingtime.lds.org կայքը որոշ օրինակների համար, թե ինչպես դա անել:*

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 10/11:
Թարգմանության հաստատումը. 10/11: *2013 Outline for Sharing Time: I Am a Child of God* -ի թարգմանությունը: Armenian 08994 201
Նկարների հեղինակներ. էջ 2. մոլորակի լուսանկարը՝ տրամադրել է NASA/JPL: էջ 4. երկրագնդի լուսանկարը © Corbis:
էջ 15. ամպերի լուսանկարը © Getty Images

ARMENIAN
4 02089 94201 9
08994 201